2011

Ա 50

Կարճ տեր տարեր

9(47·925)
Ա-75

Պյուռ-Յորք
1907

ub

2012

$ 2004

18081

ԱՍՏԻՆ ՕՏԵՐ

Ա-ՀԱՅ
1907

9(47.925)
Ա-75

9(47·925)
Ա-75

No. 2,- Հրատարակութիւն Հնչ. Կուս. Ամերիկայի Գ. Յանձնախմբի.

ԱՍՊ

ԿԱՐՄԻՐ ՕՐԵՐ

(Արտատպված "Երիտասարդ Հայաստան"էն)

ԳԻՆՆ Է 25 ՍԷՆՏ

ՏՊԱՐԱՆ
"ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ"Ի
ՆԻՒ—ԵՕՐՔ
1907

12081

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Իմ յիշատակարանը, ընթերցող, սև ու կարմիր օրերի մի երկար շարան է, այն տեղ բոլորը արցունք են, արիւն են, տանջանք ես, զուլում են։ Այժմ ես կը պատմեմ քեզ ա՛յն պատմական կարմիր օրերի մասին, որոնք և՛ փառաւոր են և՛ սոսկալի և՛ խրախուսիչ։ Այս է՛ն կարմիր օրերը իսկի մոռանալ չեմ կարող, նրան աննման կարմրութիւնը աչքիս չի հեռանում, թէ քուն թէ արթուն ես նրանց միշտ տեսնում եմ, և որովհետև պարտականութեան սրբազան օրերը մօտենում են, երբ գուցէ բաղդը ինձ էլ արժանացնէ կարմիր օրերի կարմիր պսակին, ես շտապում եմ յիշատակարանս հրապարակ հանել, որով և կատարած կը լինեմ ականատես զրողի պարտքը։ Կարդա՛ ախպէր ջա՛ն, վաղն էլի կգան էն սիրելի, էն հրաշալի, էն աննման կարմիր օրերը . . .

ՀԵՂԻՆԱԿԸ

ՀՍ 936-ամ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. ՄԱՍԻՍՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊՕՀ
Ж489/ամ.
q 1226-85 (1986-69)

[illegible]

[illegible] 15 [illegible]

[illegible] [illegible] [illegible]

1929 [illegible]

[illegible]


40
42
44
46
38
ԵՐԵՎԱՆ
ԱԽԻՋԵՎԱՆ
ՎԱՆԱՅ Ծ.
ՄՈՒՇ
ՍԱՍՈՒՆ
ՏԻԳՐԻՍ Գ.
ՄԵԾԲԻՆ
ՍՈՒՉԻՎԱ
ՇՏԵՐԲ
ՄՈՒՍ
ՏԱՏ
ՄԱՍԻՍ Լ.
ՍԱՐԻԿԱՄԻՇ
ՍԱՐԻԳԱՄԻՇ
ՍԻՓԱՆ
ՍԱՆԴԱԼԻՆ
ՍԱՐԻ
ՍԱՐԻ ԱՍՏԱՆ
ՍԱՐԻ ԱՍՏԱՆ
ՍԱՐԻ ԱՍՏԱՆ

ԿԱՐՄԻՐ ՕՐԵՐ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Ա.

Էնտեղ, ուր տեղի ունեցաւ կարմիր օրերի հրաշալի անցքը, էնտեղ Հայաստանի սիրտն է —Վան:— Արեւելեան կողմից հովանաւորուած վարագա-Արծուի սարի կանաչապատ ու ծաղկապատ չքնաղատես գագաթներով: Արեւմուտքից եղերուած Կապուտաչեայ ծովակի-ծփան-ծփծփան ջրերով: Հիւսիսից և հարաւից պահպանուած գեղեցիկ բլրաշարքերով, կանանչ ու համապիւռ ծառաստանների մէջ խոխոջուն աղբիւրներով, քչքչան առուներով, փրփրան գետակներով, զար-զարդարուած, գեղարուեստօրէն պճնուած, առօք-փառօք նստել է Վանը՝ Հայաստանի սիրտը, այստեղ դրախտ է այստեղ՝ բնութեան այս անզուգական գեղեցկուհու ծոցումը, կեանքը, ճշտազուարթ, երջանիկ և խաղաղ պիտի լինէր . . . :

Բ.

1895 թուին էր . . . Հայութիւնը գտնուում էր ծանր ու պատմական հազուադէպ մի շրջանի մէջ. մի տարի առաջ Սասունի քաջերը աշխարհը ցնցեցին իրենց անզուգական կռուի թնդիւնով, աշխարհը զարմացաւ ստրկացած Հայի զարթնումի կորովի կռուին, լայ եղաւ Սասունի կանանց եղերական վիճակին: Թուրք դարաւոր բռնապետը ստակայ, երբ զգայ իր անզօրութիւնը—խեղդելու Հայկական ընթրոտացումի գոռ ձայնը . . . տեղի տուեց, զիջեց ստորագրել և ընդունել Մայիսեան (11) բարենորոգումների հանրածանօթ Ծրագիրը, որ չիրագործուեցաւ Շնորհիւ սուլթան Համիտի և իր փոքր եղբայր սուլթան Նիկոլայի :

Հայկական հարցը մեծ անհանգստութիւն էր պատճառում Բալթիկի և Բոսֆորի ափերին կզկզած թուրք և ռուս սուլթաններին, գիշերը քուն չկար, ցերեկը դադար, պէտք էր ճար գտնել, պէտք էր միջոց՝ այս անհանգստութիւնից ազատուելու համար և երկու սուլթան եղբայրները չդժուարացան դրանում, դարմանը գտնուած էր, միջոցը հեշտ և վճիռը տրուած, պէտք էր հայերին կոտորելով ջնջել . . .

Սուլթան Նիկոլայի կարգադրութեամբ և սուլթան Համիդի հրամանով վճիռը սկսուեց գործադրուել 1895ի Սեպտեմբերից։

Արքայական հրամանը արեան ծով դարձրեց Պոլիս, Տրապիզոն, Կարին, Սեբաստիա, Ակն, Խարբերդ, Բաղէշ, Էնկիւրի, Եդեսիա, Էլէրէկ, Արաբկիր, Թոքատ և վերջապէս Վասպուրականի գաւառները, բայց Վանը՝ հայութեան այդ զարկերակը, թուրքի աչքի փուշը դեռ մնում էր . . .

Դրութիւնը կատարելապէս փոխուեց. . .

Բարենորոգումների երջանիկ յոյսերով օրօրուող և ուրախացող թիւրքահայը ցնցուեց, սարսռեց երբ երազ օրերի փոխարէն տեսաւ արիւն ու մահը ... մի օր առաջ նա օրհնում էր իր յեղափոխական գաւակներին, Սասունի քաջերին ու Մուրատին՝ Մայիսեան ծրագրի ստորագրելու, Հայկական խնդրի առաջին շղթան փշրուելու առթիւ. այսօր նա անիծել սկսեց՝ նոյն բերանով՝ երէկուայ իր օրհնածներին, ի՜նչ հիասթափութիւն։

Երէկ մենք Վարագայ պերճ ու բարձր լանջի վրայ, աննման Գեալիի մէջ երգ ու պարով, նւագածու խմբերով ծրագրի ընդունուելու ոգին էինք կատարում, հանդէսներով ու ցնծութեամբ զիմաւորել էինք պատրաստում նոր օրերին, բայց այսօր, ահա՛ հասաւ Պոլսի կոտորածի բօթը, Տրապիզոնի գոյժը, Կարինի ողբը, և այսպէս շարունակաբար . . .

Երէկ և այսօր . . . ի՜նչ անսահման անջրպետ, ի՜նչ հակադրութիւն . . .

Այսպէս, ահա, մէկը միւսի յետեւից յաջորդաբար, մի զարմանալի արագութեամբ, մեզ հասնում էին հայաբնակ բազմաթիւ կեդրոնների կոտորածների սոսկալի լուրերը, 95-ի աշունը, Հայաստանն ու Փոքր Ասիան և նոյն իսկ Բոսֆորի եւրոպական ափերը, ձիւնի սպիտակ սաւանի փոխարէն հայկական արիւնի կարմիր սաւանով ծածկուեցին, ամենուրէք մահ, համատարած ալանթալան, անտանելի սարսափ և վերջապէս սով ու գաղթականու-

թիւն . . . ու երբ դրութիւնը ամենուրէք այսպէս ծանր էր, երբ իւրաքանչիւր հայաբնակ վայր դողում էր մահմեդական բռնապետութեան և նրա հլու մոլեռանդ հետեւորդների յօրինած անտանելի կացութեան դէմ, երբ օսմանլին ու քուրդ, գնչուն ու չէրքէզը և նման գազաններ արեան ծարաւ, ալան-թալանի կարօտ՝ զուլում էին տարածում, երբ բիրտ կառավարութիւնը առիթներ էր ստեղծում կոտորածներ սարքելու, Վանը անսասան մնաց, Վանը՝ որ թուրքի սրտի ցաւն էր տասնեակ տարիներից ի վեր ս ա տ ա ն ի ա օ մ ա ր ո ւ մ արձանագրւած, Վանը՝ որ անտանելի անհանգստութիւն էր պատճառում Բոսֆորի արքայ գիշերապահին . . .

Գ.

Արդէն աշուն էր . . .

Վասպուրականի գաւառներից և գիւղերից սպանութեանց և աւար աւերումի բօթերը թափւում էին Վան, գաղթականների և փախստականների ահագին, բայց ողորմելի և եղկելի խմբերը շարան շարան գալիս էին քաղաք, սարսափը աննկարագրելի էր։ Ժողովուրդը օրից օր դողսիրտ սպասում էր կ ա ր ե լ ո ւ օրւան,- այսօր կը կտրեն, էգուց կը կտրեն, այս ահռելի միտքն էր իւրաքանչիւր հայի հոգին ճաշողը, սիրտ կտրողը էր կ ա ր ե լ ը . . . իսկ կառավարութիւնը և հայերին կոտորելու համար յայտնապէս կազմակերպւած կոտորող ճանաճիւղերը, աւելի անհանգիստ, աւելի մտատանջ քան հայերը, չէին համարձակւում ձեռ գործի սկսել. մինչ այլուր, մի ժամւան մէջ, վճռում և ամէն ինչ վերջացնում էին, առանց անհանգիստ լինելու։ Այստեղ գործը ծանր էր։

Անհանգիստ և վրդովւած էր Օսմանեան կառավարութիւնը, հեշտ չէր կոտորածի սեւ գործը Վանում սուս ու փուս գլուխ հանել, հեշտ չէր Վանեցու հետ գլուխ գնելը, նա գիտէր որ Վանում յեղափոխական ոյժ կար, ընդոստացման սուրբ կռիւը տալու ուժեղ բազուկներ կային։ Տասնեակ տարիների ընթացքում յեղափոխական կարապետ գործողների է՛ն կարող և անձնուէր աշխատանքը իր բարերար արդիւնքը երեւան հանեց։

Պատմական ճշմարտութեան դէմ չմեղանչելու համար պէտք է խոստովանիլ այստեղ, որ Վանը իր ամբողջ յեղափոխական պատրաստութեամբ, իր անման կ ա ր ծ ի ր օ ր ե ր ո վ պարտական է գլխաւորապէս Հայրիկի և Մ. Փորթուգալեանի կորովի

գործունէութեանը և ապա նրանց սաների—Վանի այդ յեղափոխական ռահվիրաներին: Բայց ցարդ անծանօթ մնացած Աւետիսեանների, Ագրիպասեանների, Օտեանների, Բաղէշցեանների, Փանոսի, Ղարաբէկի և նմանների անձնուրաց գործունէութեանը, գուցէ ուրիշ անգամ ինձ հնար լինի վերադառնալ, և այդպիսով տալ Վանի 1880—96 շրջանի անցքերի, գործիչների և ժողովրդական կեանքի իրական պատմութիւնը:

Այո՛, յեղափոխական քարոզը, յեղափոխական աննկուն գործը արդէն պատկառելի էր Վանում, այնքան պատկառելի, որի առաջին թափից անգամ, արդէն ակնածում էր օսմանեան կառավարութիւնը:

Մինչ միամիտ ժողովուրդը ազատութեան ճօտալուտ նախօրին ցնծութեան և ուրախութեան մէջ մտանում էր իր իսկական ծանրը դրութիւնը, յեղափոխականը՝ նրա պահապան հրեշտակը, գիտակ օրուայ կացութեան, ամառուանից ռազմական պատրաստութեան մէջ էր, յեղափոխական զինակիր խմբեր մէկ-միւսի յետևից Վան էին մտնում, Աւետիսեան, Մուշեղ, Մարտիկ և այլ կարող կազմակերպող — մարտիկ ղեկավարներ դալիս միանում էին արդէն եղածներին:

Դ.

Գաւառներից հասնող թալանի, արիւնի և կոտորածի լուրերը, կառավարութեան առաջին փորձերը Վանի արուարձանում, ազդարար նշաններն էին . . .

Կառավարութիւնը բացարձակապէս վախենում էր կուի դուրս գալուց, Ելլդիզը վրդովուած էր, իր կառավարութեան իսկական բարեկամ և շահերին գիտակ Վանի կուսակալը՝ Նազիմ փաշան նոյնպէս հակառակ էր կոտորածի, իսկ Թուրք Ֆանատիկ ամբոխը, թէև անհամբեր ապասում էր իր սիրելի օրան, բայց բառիս բովանդակ նշանակութեամբ վախենում էր, ըստ իր առասպելական կարծիքին, Վանում հաւաքուած հազարաւոր ֆէդայիների անունից:

Սխալ է այն կարծիքը Վանի կոտորածի յետաձգման մասին իբր թէ վանեցիները խելացի եղան և առիթ չտուին դրդռելու և կոտորած սկսելու: Առիթներ ստեղծել, պատճառներ հնարել դժուար չէր օսմանցու համար, բայց ժամանակը չէր, այդ սխալ կարծիք կազմողները, թող երբէք չը մոռանան իրականութիւնը

ա՛յն փաստը որ Վանում աւելի շատ եղան առիթներ. Հայերը աւելի անզգոյշ, յեղափոխականները աւելի յանդուգն եղան, բայց կառավարութիւնը երբէք դրանք առիթ չհամարեց, պատճառ չը բռնեց կոտորած սկսելու և իրեն արդարացնելու համար . . . թող փաստերը խօսեն։

96-ի աշնան, Վանից մէկ, մէկ ու կէս ժամ հեռու ընկած Ֆարուխ, Ցակի-Բակ, Դարման-Գեղ և Կողպանց գիւղերը ենթարկուեցան քրդական յարձակման, գիւղացիները հաւաք բերին քաղաք, օր ցերեկով, յեղափոխական երեք կարիճներ — Ղարաբէկ, Սանոյի Կարօն և Դրբէն օգնութեան հասան թալանուող գիւղերին, մի քանի օր անոնցմ ճարպիկութեամբ կուեցին քրդերի դէմ, խլեցին նրանցից բոլոր աւարը, ապաննեցին մի քանի տասնեակ քիւրդերի։ Այս տեղի ունեցաւ կառավարութեան քթի տակը, նա տեսաւ այս, բայց աչքերը փակեց, ձայն չտուեց։

Յեղափոխական զինուորական պահակ խմբերը շատ անգամ թուրք զինշերապահների հանդիպեցին, վերջինները ձայն չտալուց զատ զինուորական բարեւի էին կանգնում, նոյն իսկ զինաթափ լինում մինչեւ մերոնց անցկենալը, իսկ մի անգամ մի յանդուգն թուրք զինուոր երբ փորձեց բռնել մեր տղերքից մէկին, խմբապետ Մուշեղի հրամանով գնդակահար գետին զլորեցին նրան, Հայաբնակ (Արարուց) թաղի մէջ։

Կռիւն սկսեց հայերի կողմից . . . 96ի հոկտեմբերին Վասպուրականում տեղի ունեցած տխուր անցքերի լուրը Սալմաստ է հասնում, Արմէնական և Դրօշակեան մի քանի տասնեակ զինուորներ օգնութեան հասնելու բուռն ցանկութեամբ Ներսէսի և Նիկոլի առաջնորդութեամբ շտապում են արիւնաներկ Հայրենիք, իրենց արիւնն էլ սիրելիների արիւնին խառնելու, ինչպէս առում էր նոյն կարիճներին ընկերացող անմահ Ուսուա Փանոսը։ Կարիճների խումբը բուք բորանի, ցուրտ ու սառի մէջ բարձր սարերով, անդնդախոր ձորերով, անհուն դժուարութեամբ հազիւ Սարա հասած, բայց դաշտում, Էնգիզի փոքրիկ բլուրների տորոտում, պաշարւում են մի խումբ կանոնաւոր զինուորներով, և հազարաւոր կատաղի քիւրտերով, ըսկսւում է ահեղ կռիւը, որ մինչեւ ուշ գիշեր տոկալի ուժգնութեամբ շարունակւում և վերջանում է հայ քաջերի փառաւոր յաղթութեամբ, թշնամին կորցնում է ութսունից աւելի մարդիկ և մի քանի նշանաւոր քիւրտ աղաներ, մինչ մերոնցից միայն երեք զոհեր են լինում. միւս օրը / օղազքեասան Հայաբնակ գիւ-

դում, դարձեալ տեղի է ունենում մի աննման կռիւ, ա ն զ ո ւ գական՝ մեր յեղափոխական պատմութեան մէջ— միայն տասն և մէկ քաջեր, Դաւիթ, Զէյթունցի Հաճին, Նիկոլ, Ներսէս, Ուզուն Խեչոն, Ս. Օտեանը և ընկերները, մի ախոռի մէջ պաշարուած են թշնամու մի կատաղի խմբով, որոնք սկսում են երդիկներից գնդակահարել ախոռում պատսպարուողներին, երբ անյաջող է անցնում իրենց այս փորձը, խոտի և փուշի ահագին դեզեր են կանգնեցնում դրան դէմը և կրակ տալիս, ծուխը հետզհետէ անտանելի է դառնում և սպառնում խեղդամահ անել մեր քաջերին, երբ սրանք արդէն պատրաստուած են լինում մի օրհասական փորձ սկսել,— հերոսները միանգամից անակնկալ մի թափով ախոռի դուռը ջարդելով՝ դուրս են պանում դժոխային կըրակի հրեղէն լեզուների միջից, և որպէս հրեղէն ոգիներ թափուում թշնամու վրայ, կրակում իրենց մահափիւռ հրացանները, որոնց կենաղրաւ գնդակները գետին են տապալում Զ ն դ ի ու Շ ա ւ է շ երկու հրէշ ցեղապետներ և հինգ ուրիշ քիւրտեր, մնացած հեծեալները սարսափած Ջ ա ն ֆ է դ ա ն ե ր ի այս մահաբեր յարձակումից՝ փախչում են, մեր հերոսները ցեղապետների դիակները կողոպտելուց յետոյ նստած նրանց ձիերի վրայ, պանում են դէպի Հաֆթա-դաղի բարձունքը ուր դարձեալ ենթարկուում են քրդերի ստուարացած և կատաղած վոհմակի յարձակման, բայց քրտերը բազմաթիւ զոհեր տալով կորագլուխ հեռանում են, բարձր Հաւթա-դագի գլխին թառած դիւցազուն քաջերին անիծելով . . .: Այս բոլորը տեղի ունեցաւ Վանից միայն տասն ժամ հեռաւորութեան վրայ, հայ կորիձների Վան մտնելը շատ լաւ գիտցաւ կառավարութիւնը եւ էլի լռեց:

Այսպէս օրից օր, երկուսուհ, միմիանցից վախենալով ըսպասում էր անխուսափելի ընդհարումը. հայերն զգուշութեան համար շաբաթներով քաղաք չէին իջնում և շուկան բաց անում, իսկ խելացի կուսակալը, հայաբնակ թաղերի բոլոր պահակախմբերը, ոստիկան թէ զինուոր հեռացնել տուեց . . .:

Ե.

Զմեռը վրայ հասաւ:

Եըլդըզը և նրա հետ կոտորածի աւարառութեան անօթութեամբ տառապող Վանի թուրք խմբակները կոտորածի պատաս-

խանութութեան ծանրութիւնը, հայկական զինագրութեան սարսափը և այս բոլորի հետ Նազիմին հայերի բարեկամ կարծելու գաղափարը, նրա անընդունակութիւնը Վանի հայերը կոտորելու գործում,— Յունուարի ցրտերին Վան բերել տուին սուլթանի սիրելի թիկնապահներից Սաադէդդին փաշային, կարմիր գազանի կարմիր սիրելին։ Այս արնախումը յանձն էր առել կատարելու այն եղեռնը, ղեկավարելու այն կռիւը, որ երկար ժամանակ չէին կարողացել անել շատ ուրիշները . . .։

Սաադէդդինն էլ շուտ մեռաց, նա ուխտել էր Վան հասնելուց անմիջապէս յեռոյ ս ե ւ կ ա պ ե լ տալ վանեցի հայուհիներին, բայց այժմ երբ Վան հասաւ, նա էլ սկսեց պատկառել, նա էլ ակնածեց և ակամայ, աննկարագրելի երկչոտութեամբ գլուխ խոնարհեց յեղափոխական ուժի առաջ։ Սաադէդդինն էլ համոզուեց խորհրդաւոր և անախորժ ժ ա մ ա ն ա կ ը չ է-ի անտանելի իրականութեան, պէտք էր պատրաստուել, պէտք էր սպասել յարմար ժամանակի։

Մինչ թուրք կառավարութիւնը, արնախումների հռչակաւոր Եալդզի բռնապետը, մահմեդական մոլեռանդ ամբոխի և քրդական կատաղի ցեղերի հետ պատրաստւում էր, մինչ հայ յեղափոխական վարիչները աննման եռանդով և փութկոտութեամբ զինուորական խմբեր կազմակերպում և ռազմական այլ պատրաստութիւններ տեսնելով էին զբաղուած, և վերջապէս երբ քաղքցին այսօր-էգուց սպասում էր սրտատրոփ, կորելու մահահոտ օրան, Վասպուրականի ամէն կողմերից, հայ թշուառ շինականները, ահագին բազմութեամբ քաղաք էին թափւում պատսպար ու հաց գտնելու . . .։

Զ.

Նկարագրել գիւղերից փախչող գաղթականների թշուառութիւնները ես չեմ փորձում, որովհետև թէ՛ դժուար է և թէ՛ դրա համար պէտք է մի յատուկ եղերերգութիւն գրել։—Ահա՛ անբաղդ գաղթականների ստուար խմբերը, ահա՛ կողոպտուած ու թալանուած, ջարդուած ու վիրաւոր, մերկ ու ոտաբոպիկ մայրերի, հարսերի և աղջիկների աչքերից կախուած արտասուքի շիթերը, որոնք սիրելիների ողբերգական մահն են լալիս, այդ աչքերը, այդ դէմքերը մի-մի պատմական գրքեր են . . . հայրեր յուսակտուր և

այլանդակուած, երիտասարդները վրէժի բոցը սրտերում, այրումմրկւում են անճար-անզէն, անօթի ու ցրտատար փոքրիկների լայ կականը ամբողջացնում է փախստական գիւղականների եղկելի խմբերի կատարեալ թշուառութիւնը։ Լցուել են եկեղեցիների բակերը, ուսումնարանները, բաղխում են քաղքի ախպօր դռները, մի ապաստան, մի բ ր դ ի ւ ճ հաց են ուզում, և բացւում են դռները, քաղքին հիւրասիրում է իր շինական ա խ պ օ ր ը։

Չնայելով որ վանեցին ոչինչ չէր խնայում իր շինական եղբօր ցաւն ամոքելու, փորը կշտացնելու և նրա մերկութիւնը ծածկելու համար, բայց այդ բոլոր ջանքերը անբաւական էին սարսռալ ցաւերը թեթևցնելու, ծուլ արտասուքը ցամաքեցնելու և նրա անհուն թշուառութիւնը մխիթարելու։ Նիւթական ահագին օգնութիւն էր հարկաւոր և այդ բարեբաղդաբար հասաւ։ Բողոքական միսիոնարները, իրենց հիւանդանոցով, գաղթականաց ձրի ու թարմ հաց մատակարարող փուռերով, ընդարձակ գործարանով, ամոքում և պահպանում էին հայ թշուառների բաղմութիւնը։ Ամերիկուհի Մ. Ք ը ճ պ ը ւ ը իր մայրական խանթակաթ սիրով, ղժբաղդներին և վիրաւոր-հիւանդներին փութահաս օգնութեամբ, յեղափոխական վիրաւորներին ձրի քրոջ սիրով հացրած դեղօրայքով և իր իսկ ձեռքերի գաղտագողի բժշկութեամբ մի մարդասէր և գովելի դարձ կատարեց, որով անմոռանալի անուն, անջինջ յիշատակ թողեց, մի անուն, որ միշտ օրհնուի պիտի—կեանքափրփանք և մխիթարանք ստուեց, մինչև երեկոյ անդադար, երբէք յոգնել չգիտցող Ամերիկուհին շրջելով հայոց թաղերը և թշուառների բնակարանները . . .

Այսպէս, անսահման թշուառութեան մէջ, կիսաքաղց, կիսամերկ, բայց մշտական ահ ու սարսափ սրտերիս, անցկացրինք սև ձմեռը իր սրտով և նեղութիւններով։ Մեր մայրերն անիծեցին սև ձմեռուան և ասին — է ր թ ա լ ղ է լ ն ի և գ ա լ ղ չ է լ ն ի ս ե ւ ձ մ ե ռ . . .

Է.

Եկաւ գարունը։

Կատաղած գաղանը—Սասդէղինը դուրս եկաւ Վանից և սկսեց շրջել Վասպուրականի քիւրտ աշիրաթների մէջ հրահանգելու և խրախուսելու վայրենի քիւրտերը, ծծալուտ կոտորածը անահանելիւղ առաջ տանելու համար, միւս կողմից Վան հաւաք-

ուել սկսեցին կանոնաւոր զօրքերի բաղմաթիւ խմբեր, որոնք օր ցերեկով, կրուպպի թնդանօթների հետ թափօրներ տալ սկսեցին հայոց փողոցներում, մահ ու սարսափ տարածելու համար։

Կառավարութիւնը կարգադրեց հեռացնել քաղաքից բոլոր գաղթականներին, և ամենախիստ միջոցներ ստեղծեց այդ միտքը իրագործելու, բայց ապարդիւն անցաւ։ Նենգ օսմանլին հեռացնել էր ուզում գիւղացիներին, քաղաքից դուրս, խուլ անկիւններում, իր սև գործը աւելի հեշտութեամբ վերջացնելու. յուսով, բացի այդ, նա հաւատում էր որ բոլոր յեղափոխականները գիւղացու տարազ են կրում և այդ միջոցով ազատ շրջում են քաղաքում։

Ծառերի ծաղկելու, դաշտերի կանաչելու, սարերի զարդարուելու և բնութեան փոյթեռանդ զարգանալու և աճելու հետ, օրից օր մերձենում էր սև կոտորածի սև ուրուականը, նա այլևս անխուսափելիօրէն մօտեցել էր, դրան հաւատում էին ամէնքը։

Ահաւոր օրերի գալուստը, կարմիր օրերի շուտափոյթ հասնելը սկսեց անհանգիստ անել և՛ մեր յեղափոխական պետերին։

Վանի ամենայայտնի ռազմիկները և ղեկավարները—Գարեգին, Զարա-բէկ, Ներսէս, Դրբէն, Ֆարհատ և ընկերներ ճիւաղոր խմբով Սալմաստ գնային զէնք փոխադրելու, սահմանն անցած, նրանց Խոյում ձերբակալեց Պարսից կառավարութիւնը։

Նիկոլ, Շատախի քաջ Շէրօն 40-50 ընկերներով նոյն նպատակով դարձեալ Սալմաստ մեկնեցան, սահմանագլխում—Դէրբէկի վանքում կռուելուց յետոյ՝ նրանք էլ Սալմաստում ձերբակալուեցին . . . Սրանք դժբաղդութիւններ էին, որոնք ծանր կրուսանների պատճառ դարձան։

Սաադէդդինը հարմար համարեց ըղձալի օրը,—գարուն է, սար ու դաշտ բացուած, քիւրտ աշիրէթների անմիջական օգնութեան հանելը հեշտ, հայ յեղափոխականների ոյժը թուլացած կարևոր ընկերների բացակայումով . . .

Ը.

Յունիսի 2-ին, կիրակի, Այգեստանի Մ ե ծ-Ֆ է ն դ ը ր չ ի թաղում յեղափոխականների հետ ընդհարուելու և կոտորած սկսելու ծ ի ա կ դիտումով, կառավարութիւնը բազմաթիւ հեծեալ զինուորներով և ոստիկաններով պաշարեց գիշերով ամբողջ թաղը և խուզարկեց Տէրօենց-Լազգենենց տունը, ուր իբր թէ վոռանդաւոր թղթեր գտան, ձերբակալեցին Օր. Զարուհի Տէրօեանին—որն

մինչև այսօր էլ հեծում է աքսորանքի մէջ—նրա մօրը և անապատական երկու աբեղաների... Բայց կառավարութիւնը իր խակական նպատակին հասնել չկարողացաւ։

Խուզարկութեան օրը նկատելի էր թուրքերի անսովոր անհանգստութիւնը և կատաղութիւնից այլանդակուած դէմքերը։ Այդ գիշերը տեղի ունեցաւ և սաստիկ հրացանաձգութիւն։ Շուկան մի ամբողջ շաբաթ փակ էր։

Կառավարութիւնը երբ տեսաւ իր սկսած փորձի անյաջող վիճակը՝ Կ ա ր ա դ ա ղ ի, այնպէս էին անուանում թուրքերը Մեծ Քէնդրչիի շրջանին,—և իսկապէս այս թաղը արժէր այդ անուան, այստեղ ծնան ու սնան վասպուրականի ընտրելագոյն զաւակները՝ Աւետիսեան Մկրտիչ և Գրիգորիս, Օտեան Գէորգ և Սեղրակ, Գաբրեգին, Ուսուա Փանոս, Փանոս Թ. Վաղգէն ևն. ևն.—խուզարկութեան անուան տակ սկսուած կռիւը թողեց և դիմեց ամենավատթար միջոցի... Կիրակի՝ լոյս երկուշաբթի գիշերը, Այդեստանի արևելեան Լողմ, բայց դաշտի մէջ, վարագայ աչքերի առաջ Ո ւ ր բ ա թ Ա ռ ա ւ ի ափերի վրայ խմբուած թուրք զօրքը, կէս գիշերն անցած սկսեց խմբական անընդհատ հրացանաձգութիւն և չարագուշակ փողահարումը մինչև արշալոյսը։ Դա սարսափելի անցքերի սկսուելու ազդանշանն էր։ Սկսուե՛ց արդէն։

Թ.

ԿԱՐՄԻՐ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Առաւօտ էր.—Յունիսեան չքնաղատես մի օր, արևն սկսեց նպանի հարսի նման բարձրանալ Արծուի-վարագայ չքնաղ սարների ամենաբարձր կէտից՝ Գ ա լ ի լ ի ա յ ի ց, Ջրից բաժանուել դժուար էր նրան, բայց իր ոսկեհուռ ճառագայթները երկար ժամանակ գրկախառնուած համբուրեցին և փայփայեցին լերան գագաթը, սփոփեցին նրան, ապա անթիւ անհամար, գունագեղ և փլփլուն ցրուեցին լանի ծառազարդ և կանաչածածկ մակերևոյթը, դաշտերի ծաղկազարդ երեսը, լեռների ծաղկապսակ լանջերը, փայլեցնելու ջրերի անհանգիստ ալեակները և կապուտ ծովակի փրփրան-արծաթաջրած ալիքները։ Բնութիւնը աննման էր, նրա նկարի ներդաշնակութիւնը, գոյների աննման պէսպիսութիւնը՝ աքանչելի, ամբողջութիւնը՝ հնաշխարհիկ, երեւի նա չգիտէր թէ ինչեր են կատարուելու մի քանի ժամ յետոյ, թէ ինչ հրեշաւոր

ՄԿՐՏԻՉ ԱՒԵՏԻՍԵԱՆ

Ի՞նչ հրէշաւոր անցքերի է ականատես լինելու, ապա թէ ոչ, նա այդպէս չէր պճնուիլ, որը միայն հեգնելու, ծայրագոյն ծաղրի բնաւորութիւն ունէր, եթէ գիտնա՞ր, նա սեւ կը կապէր։

Ես այդ ժամանակ մեծ քէնդրչու հրապարակից անցնելիս, տեսայ զօրքերի մի սուար խումբ, կատաղի ու փրփրած, դժոխքից նոր դուրս եկած սատանաների զարհուրելի աչքերով, թեւերի վրայ բարձր պահած — ծածկած մի դագաղ տանում էին, դագաղում ծածկուածը իբր թէ գիշերուայ կռուին սպաննուած յիսնապետի մարմինն էր, որին սպաննել էին Ուրբաթ-Առաւմ հայ յեղափոխականները... Արդէն հրահանգուած զօրքերը հանդիպած հային ծեծել և թալանել սկսեցին, կառավարական պաշտօնեաներ, դատաւորներ, ոստիկանապետ եւն. եւն. սկսեցին գնալ կռուի վայրը—Ուրբաթ Առաւն, քննութիւն կատարելու... մի քանի ժամից աչքակապութիւնը իր ամբողջ այլանդակութեամբ երեւան եկաւ, քննութիւնը աջող վախճան ունեցաւ, կատարուածը բացուեց կառավարութեան համար, և նա արձակեց պատժի անմիջական վճիռը։ Դէպքը ըստ կառավարական յայտարարութեան այսպէս էր եղել.— գիշերը հայ յեղ.ների մի խումբ յարձակուել էր գիշերապահ զօրքերի վրայ և սկսել կռուել, կռուի ընթացքում թուրքերից սպաննուել է մի յիսնապետ և մի ձի՝ հայերի կողմից,— քննութիւնից վերադարձող հրէշները ձերբակալեցին անմիջապէս՝ Յ. Պարթեւեանին —որը ձիան տէր լինելու սուտ յանցանքով ամբաստանւում էր,—Թէրլէմէզեան Կարապետին և Սօլախեան Պօղոսին՝ իբրեւ կռուին մասնակցողների, չարագործ ա ւ ա դ ա կ ն ե ր ի համախոհների։ Այս երեք դժբաղդները, կռուի ընթացքում, արքայական բանտից —Ակռբի գիւղի մօտ՝ յանկոյների գետնաձորում տարուելով՝ ամենասոսկալի չարչարանքներով սպաննուեցին—կ ի մ ա - կ ի մ ա բրդեցին անմեղների մարմինը...։

Մի կողմ, Սասդէդին արիւնարբուի համար, պաշտօնապէս կոտորածի նախերգանքն էր կատարւում, մի այլ տեղ, թուրքերի կեղրոնական թաղերից՝ Նոր Շէնում և Շամիրամայ թաղում, նըշանաւոր թուրքերի տներում, ինչպէս հեծեալ ոստիկանների պետ Թափուր Աղասիի և պետական հաշուակալ Հէսաբ էֆէնտիի, հաւաքուած մոլեռանդ խուժանը, կ ո մ ի տ ա ջ ի խմբերը իրենց առաջնորդներով և վերջապէս Մօլաներ, ամբողջ գիշեր անքուն խորհրդակցում էին, պատրաստւում՝ խմբերի բաժանւում։

առաջին յարձակման տեղերը որոշում՝, զինուում կառավարական զէնքերով...։

Մէկ ժամ հազիւ էր անցել, կեղծ դաղաղակիրների հայկական կոտորած երդող յուղարկաւորների թափօրի երևալուց, Խաչ-Փողոցի և Ս. Յակոբի թաղերում, զինուորներից անպատմելի ծեծ կերած ջարդ ու փշուր եղած փախստական հայերը ճեղ բերեցին Թուրքերի թաղերում տեղի ունեցած արտասովոր պատրաստութեանց և զինուած խմբերի ադաս շրջման մասին զանազան լուրեր։

Սարսափը բոլէ առ բոլէ սաստկանում էր։

Հայերն սկսեցին իրենց թաղերում եղած խանութներն էլ փակել և տները քաշուել, ուր ոմանք զբաղուած էին ինչոր հնար էր պահել՝ աւար-թալանից ազատելու համար, պահել սկսեցին. շատ կանայք, աղջիկներ և երեխաներ քարեր, աւազ և ճոխիր կուտել սկսեցին կտուրներում, կռուի ժամանակ թշնամու աչքերը կուրացնելու համար։

Կէս օր էր։ Ցունխեան փառահեղ արևը, կապոյտ երկնակամարի ամենաբարձր կէտից, կրակ աչքերով, բոցեղէն ճառագայթներով, կանգնել անվրդով, անթարթ դիտում էր... Կեանք չկար. հայոց թաղերում, երթևեկը խստաս դադարել էր, մինչ թիւրքերի ճօտ, Սասդէդդինի լակոտները մէկ մէջիդից միւսն էին շտապում կրակ կտրած, հրահանգներ տալիս, զինուած խմբեր և վերջապէս ամէնքը դիմում էին մէջիդ-ջամիները, ճարդկութեան ճեղք, քաղաքակրթութեան պատուհաս մահմէտական աղօթավայրերը. այնտեղ ճոլեկրօն, արեան պապակ ճոլաները, քարոզ-խրատ էին կարդում՝ յանուն երկնաւոր ճարդարէ Մահմէտի և նրա Սատուածաշունչ վոխանորդ սուլթան Համիտի և վերջապէս յանուն իրենց կրօնական ընդունումների, սրբագործուած պան-թալանի, առանց բոլէ կորցնելու, առանց լենայելու, առանց վախենալու յարձակուել հայոց թաղերի վրայ և կոտորել, նրանք խոստանում էին Մահմէտի և նմանների երևակայութեան ծնունդ ջէնէթը, և Ֆաթմա Զէյնաբների հիւրի-փէրի աղջիկներից եօթանասունը նրան՝ ո՛վ որ իր պարտականութիւնը սրբութեամբ կկատարէր, իբրև հաւատացեալ մուսլիման, մէկ ան հաւատի փոխարէն տասը կստանէր...

Վճռական բոլէն հասաւ, ճոլաների խրախուսանքը, Սասդէդդինի հրահանգը, դուրս բերեց ջամիների զինուած գազանների

հարիւրաւոր խմբերը, որոնցից իւրաքանչիւրը առաջնորդում էր մի մօլա, բոլորովին ապիտակ հագած և թևերը մերկացրած, ծրարուած մի հարիւրապետ և կամ աւագակութիւնով, մարդասպանութիւնով հռչակուած յայտնի մի սրիկայ կառավարում էր խումբը, իւրաքանչիւր խմբին հետևում էր թալան-կողոպտող խմբեր, որոնց մէջ լինում էին կանայք, զինուած բահ-փէտաանոցներով, կացին-շշերով: Մօլան խմբի առաջ ընկած կարդում կամ երգում էր Ղուրանից, մաքեր ապականող և կաշկանդող այդ գրքից, և մէջ ընդ մէջ ռնում բարձրաձայն: Մ ա հ մ ա դ օ՛ ս ա լ ա ւ ա թ օ՛—որին մասնակցում էր ամբողջ խումբը սոսկալի ժխորով:

Նշանը տրուած էր:

Գազանային գոռում-գոչումներով դուրս թափուեցին որջերից բազմաթիւ վոհմակներ, առաջնորդ մօլաներ ձեռքերին ականջները դրած՝ ռնացին առաջին ապաւաթը, մոլեկրօն ամբոխը որոտալից թնդիւնով արձագանքեց Մահմադօ՛ ապաւաթօ՛, հազարաւոր հրացանների միաժամանակ պայթիւնը պատասխանեց առաջին ապաւաթին,—Այդեստանի արևմտեան մասը ծածկուեց սև ծուխի թանձր ամպերով . . .

Առաջին և սոսկալի յարձակումը կրեցին թուրք թաղերով շրջապատուած փոքրաթիւ հայ թաղերը, ուր տեղի ունեցան սոսկալի ոճիրներ: Հրացանների որոտումները հեղհեղէ կը բազմանային, ծուխը անթափանցելի սիներով, լեռնանման քուլաներով երկինքն էր բարձրանում, իր սև թևերով գրկում ծառերի կատարները և ամբողջ շինութիւնները: Այրում էին թշուառ և անօգնական հայերի տները, այրում ուսումնարաններ, այրում և եկեղեցիներ: Արի՛ն, մա՛հ, բոց ու կրա՛կ ամէն տեղ:

Ամբոխը գայրագին խուժեց, ջարդ ու փշուր եղան դռները՝ կայինների և տապարների ծանր հարուածների տակ. անզէն ու սարսափահար հայերը սոսկումով էին դիմաւորում իրենց դահիճներին: Կիները ականատես եղան իրենց տարաբաղդ ամուսինների խողխողմանը և արնախեղդ լինելուն, քոյրերը՝ իրենց եղբայրների գլխատումը, զաւակները՝ իրենց հայրերի ողջ ողջ այրմանը:

Մինչ թշնամին զբաղուած էր իր եղեռնով, մինչ անպաշտպան թաղերը լափուում էին բոց ու կրակէն, յարձակումներէն ազատ հայոց կեդրոնական թաղերի հայերից որը թաղ է կենում, որը՝ փախչում, որը՝ իր երեխաները աւելի ամրաշէն տներ է փո-

խաղերում։ Իսկ յեղափոխականները, զէնք կրողները շիպ-շիւար էին մնացել, անգիտակ և անտեղեակ միւս թաղերում կատարուող ոճիրներին, ուզում էին հաւատալ թէ այս բոլորը կառավարութեան կողմէն սարքուած մի թակարդ էր, որով նա, իբր թէ, նը-պատակ ունէր այդպիսով իրենց թաքստոցներէն դուրս բերել յեղափոխականներին, իրենց զէնք ու ռազմամթերքով և ապա խուզարկութիւն կատարելէ յետոյ սկսել կոտորածը։ Թէև հրաման չտրուեց Յեղափոխական պետերի կողմէն անմիջապէս զէնքի դիմելու, բայց որոշուեց կազմ ու պատրաստ կենալ և հրամանի սպասել։ Այդ ժամանակ երկու հակառակ պատկերներ էին գլորուում, հայոց կողմից կանանց լաց ու կոծ, մանուկների ճչոց, համատարած ախ ու վախ, իսկ թուրքերի կողմից հրացանների պայթիւն։

Շամիրամայ թաղի և Գնչուների միացեալ խմբերը յարձակում գործեցին Հայկավանքի վրայ։ Այնտեղ հայերին խողխողում էին դաշոյններով, շշերով, կացիններով... Քառասուն փարանոց գնդակը ափսոսում էին ասելով, հայը քառասուն փարա չարժէ, բրդեցին անպատմելի տանջանքներով երկու հարիւր ինսուն մարդ, որոնցից երկուսը քահանայ, երեք կին և երեսուն երեխաներ։ Հայկավանքում լկեցին և զօրով տարան բազմաթիւ կանանց ու աղջիկների, այրեցին եկեղեցին ու ուսումնարանը, և բազմաթիւ տներ իսպառ թալանեցին, տներից բացակայողները և մի քանի ազատուողները ապաստանում են իրենց հարևան Թէմուր Զադէ Ղալիբ փաշայենց՝ ճիւաղ-հրէշի տունը, ուր շաբաթ օր տեղի ունեցաւ եղեռնի ամենասոսկալին... Հայկավանքի հարիւրաւոր հայերից միայն մէկ երիտասարդ զէնք կունենայ, թուրքերի յարձակման ժամանակ, մի երկու ժամ յանդուգն դիմադրութիւն անելուց, մի քանի թուրք սպաննելէ յետոյ, ինքն էլ, երբ փամփուշտները պրծնում են, սպաննուում է՝ կտոր-կտոր լինելով թշնամու կացինի տակ, այս քաջի անունը Պօղոս էր... Հայկավանքը մոխրակոյտ դարձաւ, աւերակների ու փլատակների ընդարձակ տարածութիւն, օսմանեան սպանդանոց և խեղճ հայերի գերեզման։

Միևնոյն ժամին, թշնամու մի այլ խումբ յարձակուում է Թորոսանի թաղի անզէն թուրք դրացիների բարեկամութեան վստահ հայերի վրայ. երեսուն չորս մարդ, մի քանիսը կին ու ծծկեր երեխաներ, այս թաղում նախ քան այս դէպքերը իր հայասիրու-

թեամբ զովուած յայտնի Ռէզիենք հաւատաքննական տանջանքներով սպաննեցին իրենց տունն ապաստանած այս հայերին, մինչդեռ ո՛չ լաւ անուն ունեցող Ճերմակ օղլու Եուսուֆը իր ճօտ ապաստանողներին մինչև վերջը պաշտպանեց։ Այսպէս եղաւ և ամէն տեղ, լաւ կարծուած թուրքերը վատթար դուրս եկան, վատերը՝ լաւ եղան։

Հայկավանքի և Թօրմանի թաղի վրայ յարձակուողները միացեալ ուժով դիմում են դէպի բերդաքաղաքը, ուր ամբարուած էր հայերի հարստութիւնը՝ շուկան և մի քանի հարիւր տուն հայ նրանց ախորժակն էր գրգռած, այստեղ նրանք հանդիպում են զօրաւոր ընդդիմադրութեան։ Հազարապետ Էմին բէկը, մի ճարդասէր Զէրքէզ, Վանում սիրելի և յայտնի Զարքեազ Բինբաշի անունով, իր զօրքերով արգիլում է նրանց և նոյն իսկ զէնքի դիմում, խուժանը տեղի է տալիս, փախչում է։ Շնորհիւ այս հազարապետի շուկան և քաղաքամիջի հայերը ազատ մնացին թշնամու վայրագութիւններից։ Էմին բէկը ընթացաւ իր թագաւորի և նրա ներկայացուցիչ Սաադէդդինի դէմ, գնդակահարեց մի քանի զինուորների, որոնք ուզում էին ջարդել շուկայի դռները, և դրանով՝ նա մի ճարդասէր գործ կատարեց։

Նոր-Շէնի և Փշի Փողնի հիւսիսային կողմ, Ակռբիի բարբարոսների ճօտ, յանկոյնների հեղեղատում, հաւաքուել են մի քանի հազար թիւրքեր, և լսում Սաադէդդինի հրահանգները, նա՝ նստած իր ձին, շրջապատուած իր անբաժան թիկնապահներով, իր ամբողջ խանդն ու եռանդը, պերճախօսութիւնը հրապարակ է հանել, յորդորում է, խրախուսում և քարոզում է յանուն Մահմէդի, լսող ամբոխը գոռում է մա՛հ անհաւատներին, Փառք Սուլթանին, սալաւաթը որոտում է, Զմզմաղաբի և Մրտոտ քարի անահ ժայռերն էլ վախից կրկնում են նրանց աղաղակը։

Հազարաւոր հրաղէնները միանգամից գոռում են, գնդակները վը՛զ, վը՛զ, վո՛ւ, վո՛ւ են անում, չարագուշակ բուի պէս վայվայում Ս. Յակոբի և Զաւուրմի հայոց գլխին նրանց սև օրը ողբում։ Անապատելի և բուռն յարձակումը այլայլում է չորս կողմից գայլերով շրջապատուած խեղճերին, ոչխարների հոտը ապաստանում է եկեղեցին, կարծելով թէ թշնամին չի ճօտենայ Աստուծոյ տանը, նրան խաթը՛ր կանէ։ Բայց զո՛ւր, գազանները ճանում են եկեղեցին և այնտեղ որսխողխող անում յիսուն հայե-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ա. ԽՄ. Հ

րի, որոնցից երկուսը քահանայ, կողոպտում եկեղեցին իր զարդերից և սպասներից, ապա կրակի կերակուր անում, մնացեալները ապաստան են փնտռում կաթոլիկ վարդապետների մօտ և Պարսից Հիւպատոսարանում։ Հիւպատոս Միրզա-Հիւսէյին Խանը անխտիր ընդունում, տեղ էր տալիս և պաշտպանում իր մօտ ապահովութիւն որոնող Հայերին։ Կորիճ Թուրշեան եղբայրները—մի քանի ժամ դիմադրելուց յետոյ սպաննւում են, սպաննւում է և քահանայ Գրիգորը, որի զաւակները մի քանի ժամ քաջաբար կռւում են, հարիւրաւոր խուժանի դէմ, մէկ հրացանով և մէկ ատրճանակով։ Շանօյի-Դարի Հայերը նոյն վիճակին են ենթարկւում։

Անպաշտպան թաղերում իրենց սխրագործութիւններով քաջալերուած թշնամին առաջանում է դէպի Շան-թաղը, ուր յանկարծակի բերելով յաջողեցան միայն մի հիւանդ մարդ վիրաւորել և երկու կին սպաննել, երբ վրայ հասան կորիճներ՝ Գարեգին և Սահակ Փահրիդեաններ և Սանօյեան եղբայրներ, որոնք անահ նետւում են բաց փողոցը խուժանի դէմ ու դէմ ու սկսում գնդակներ թափել թշնամու գլխին, անարի թշնամին սոսկաց իր մի քանի դիակների ի տես՝ և փախաւ։ Ս. Յակոբի և Շանօյի-Դարի կռտորածը հարիւրէն անցկացաւ։

Ժ.

Ռշտունեաց երկրի հոգէաւ Շաքրը, իր հազարաւոր հետևորդներով դիմում է Արարքի շրջանի վրայ, մի մաս հայեր պահպանւում են ռուսահպատակ Կարսցեանների տանը, մէկ մասը փախչում կեղրոնական թաղերը, իսկ մի մասն էլ դարձեալ բարբարոս թուրքերի տունը կեանք խնդրում, ուր դարձեալ բարբարոս հիւրասիրողների սրերին են զոհ լինում։ Ցաճ իկ խուժանը մինչեւ Զ զ մ ա չ ո ն ց տուն հասնելը՝ անխնայ կոտորում և կողոպտում է, սպաննում են հ ա ր ի ւ ր յ ի ս ո ւ ն մարդ, ամէն հասակէն և սեռէն անխտիր։ Թշնամու մինչ այդ բոպէն անարգել յառաջխաղացումը արգիլում է Զ զ ե ա ն ք ա ջ Ա ր շ ա կ ը ի ր ե զ բ օ ր հ ե տ. մէն մինակ կռւում է նա ամբողջ բանակի դէմ, թշնամիէն տասնեակ վատեր վիրաւորում և սպանում է, երբ վիրաւորւում է և իր եղբայրը, և թշնամու կրակը լափում տունը և նոյն իսկ իրենց կեցած սենեակն էլ, նա դուրս է թռչում կրակների մէջէն, դողում է թշնամին—իր պինդ շրջ-

թան քանդում և հերոսին ճամբայ է տալիս։ Կլոր-Դարում ինքնապաշտպանության են դիմում Բարաղամեան եղբայրները և ի՛նչ ասել կուզի, որ լաւ վախճանի են հասնում։

Օրը երեկոյանում էր։ Սանոեանների, Փահրիզեանների և Բուռնուքեանների ընդդիմութիւնը յանկոյներէն, Արշակ Զգեանինը՝ Արարքէն յետ մղեցին—փախցրին թշնամու զոռ բանակները, յարձակումները դադրեցան։ Արևն լուռ վկայ այս բոլորին, ականատես նախճիրներին, խեղդուած, այրուած տների, ուսումնարանների և եկեղեցիների ծուխէն, երեսը ներկուած, հեղուած ծով արիւնէն բարձրացող վարդագոյն գոլորշիով, փախչում էր սարսափահար, հանգիստ, մխիթարութիւն գտնելու իր խանդակաթ մօր գրկումը, կապուտ ծովակ—փրփրան ալիքների արծաթ վերմակի տակ, զով հով կոհակների զզզան զեփիւռների տակ։

Կոտորուած, այրուած ու թալանուած թաղերումը, ողջ մնացած կանայք ու երեխաներ, իրենց սիրելիների յօշոտուած, այլանդակուած դիակների մօտ, սարսռատար, անհուն ցաւով համակուած, վախենում են անգամ լաց լինելէ. ա ր տ ա ս ո ւ ք ը ք ա ր ա ց ե լ է, ա չ ք ի ա ղ բ ի ւ ր ը ց ա մ ա ք ե լ։ Լկուել են շատ կոյսեր, տարուել շատ հարսեր,—օգնութեան հասնող չկայ, դիակներ իրենց աչքերէն, կամ իրենց դիակներէն հեռացնող չկայ. բոց-հրդեհը հանգցնող չկայ, էրուած խանձուած սրտին մի պուտ ջուր ածող չկայ։

"Զուլումն էկաւ կրակ թափեց մեր վերէն,
Ցաճիկն էկաւ արիւն առեց մեր սրտէն . . .":

ԺԱ.

Գիշերը իր վրանի սեւ սիւները կամաց կամաց հաստատելով ծածկեց երկիրը իր խաւարակուռ թեւերով։

Գիշերուան հետ կեանք եռալ սկսեց մեր թաղերում, երեւալ սկսեցին մեր պահապան հրեշտակ զինուած խմբերը, որոնք էլ արձակ համարձակ շրջել սկսեցին, մի նմանը չտեսնուած ոգեւորութիւն տիրեց, կանայք, պատանիներ և բոլորը հետեւում էին զինուած խմբերին՝ " Ձ ե զ հ ե տ տ ա ր է ք զ ի մ տ ղ է ն Ձ ե զ հ ե տ մ ե ռ ն ի, Ձ ե զ հ ե տ ա պ ր ի, Ձ ե զ ի մ ա տ ա ղ զ ի մ տ ղ է ն,,։

Յեղափոխական ընդհանուր ժողով տեղի ունեցաւ Մկրտիչ Աւետիսեան Թէրլէմէզենց տունը։

Նախօրօք տեղի ունեցած խորհրդակցութեանց և որոշմանց համաձայն,— կառարուած Արմէնական Աւետիսեանի, Հնչակեան Մարտիկի և Դաշնակցական Պեռօի միաբան գործունէութեամբ, թողած գաղափարների տարբերութիւնը, կուսակցական անջատումը նրանք յանուն տանջուածների, յանուն սուլթանական դաժան լծի տակ հեծողների, և վերջապէս յանուն անպաշտպան հայրենակիցների փրկութեան, վճռեցին դուրս գալ կռուելու դաժան դահճապետի և նրա բիւրաւոր զօրքերի դէմ։ Երեք կազմակերպութեանց ներկայացուցիչները կազմեցին պ ա տ ե ր ա զ մ ա կ ա ն ա տ ե ա ն, համաձայն համայն կուռողների միաբան ընտրութեան։

Հինգ հարիւրից աւելի փամփուշտաւոր հրացան կրող զինուորները, և ապա կրկին չ ա խ մ ա խ լ ի, ա զ ա լ ի հրացաններ և ատրճանակներ վերցնող երիտասարդները, կազմեցին երեսուն և հինգ խմբեր։ Զինուորական ատեանի կեդրոն և խորհրդավայր որոշուեց Աւետիսեաններենց տունը, ուր պիտի մնար և պահեստի խմբերի գլխաւոր ոյժը, ռազմամթերքը։ Որոշուեցին նոյնպէս այլ պահեստի գնդերի վայրերը, օգնական խմբերը, լրտեսող և սուրհանդակ խմբերը։

Թշնամու դիրքերի և յարձակման կէտերի համաձայն, մեր անմիջական—դիմադրական ուժերը երեք գլխաւոր գծերի վրայ կեդրոնացան, Այգեստանի հիւսիսային կողմը՝ յ ա յ ն կ ո յ ս ն ե ր ի դիրքի առաջին և ամենավտանգաւոր պաշտպանութիւնը յանձնուեց յայտնի քաջերի, որոնց պիտի առաջնորդէր Շահէն,— Զորթանեան Ս., Արարքի դիրքը՝ Ուզունի (Ամիրխանեան Օ.) հրամանատարութեան տակ, Այգեստանի հարաւային կողմէն արեւմտեան գծի հայերի թաղերը թիւրքերէն բաժնողը —Արարքէն— խաչ փողան երկարող փողոցի դիրքեր՝ կեդրոնացած Թիւթիւնջոնց տանը՝ Մուշէղի (Թանգարաջեան Ի.) հրամանատարութեան տակը։ Այս երեք գլխաւոր դիրքերը ունէին իրենց երկրորդական և երրորդական բաժանումներ էլ, որոնք բազմաթիւ լինելու համար յիշատակել աւելորդ է։ Բայի Աւետիսեաններենց տանը եղած գլխաւոր պահեստի գնդէն, երկրորդական պահեստի դունդը կեդրոնացած էր Մեծ Քէնդրչու վրայ—Կոնդուրաջոնց տանը Օտեան Ս.ի հրամանի տակ։

Այս կարգադրութիւնների լուրը կայծակի արագութեամբ տա-

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑ

(ՄԱՐՏԻԿ)

բածուեց Հայկական շրջաններում, որը առաջացրեց ըղձալի ոգեւորութիւն։ Շնորհիւ Աւետիսեանի, Մարտիկի և Պետոի խելացի, անձնուէր գործունէութեան ու կարգադրութեան, օրեր շարունակուող այս առաջին դիմադրական և պաշտպանողական կռուում պահուեց օրինակելի կարգապահութիւն, որով իրենք յաղթական և անկորուստ, իսկ թշնամին պարտուած եւ ծանր կոչ բուսաներով դուրս եկան անհաւասար կռուից . . .

Բոլոր կռուողների հագի տարազը փոխուած էր, նրանցից իւրաքանչիւրը կրում էր սև փափախ, հագին արխալուղ, խրմբապետները գլխարկի, իսկ զինուորները թեւի վրայ կարմիր խաչ նշան։

Դարաւոր սորուկը գարթնել էր, Լէնկթիմուրների և Նմանների արշաւանքներ տեսնողը, նրանց ամբողջ սոսկումները, կառողութեան թափը տարող Վանեցին— ոտքի էր կանգնել, Շընորհիւ յեղափոխական պրոպագանդի, յեղափոխութիւնը տուեց իր պտուղը, որով և մի փառաւոր էջ աւելացրեց մեր նորագոյն պատմութեան մէջ . . . ։

Գիշերուայ մթութեան մէջ, երբեմն երբեմն բարձրանում էին հրեղէն լեզուներ— պէտ պէտ կրակներ, հրդեհուած թաղերից...։

ԺԲ.

ԿԱՐՄԻՐ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Այգեստանի հիւսիսային կողմը Զմզմազարի Ծրտոտ քարի, Ակըռբու, հարս ու փեսի և սեւ քռաի ոտների տակից խիտ ծառաստանների և անտառների մէջ, կարկաչուն առուների և անհանգիստ գետակի հետ, արեւելքից արեւմուտք ձգուած բանաստեղծական ձորակում, նստել է Ցանկոյանների եկեղեցին և դպրոցը, նրա հանդէպ, ձորակի հակառակ կողմում, շարուած են Խէրանի, Շան, Շաղնի և Դարի-Գլխի թաղերի տները, այստեղ մենք բռնել էինք վեց դիրքերը, ձորակի վրայ, երեք դիրքեր Նոր Շէնի հանդէպ, Շահէն խմբապետի հետ այստեղ էին և Վահէն, Զէյթունցի հաչին, Սանոեաններ, Փահրիզեաններ, Մհէրի Տիգրան, Հաֆթվանցի Մարտիրոս և Զաքարը, եւ Աշճեան Գէորգ քաջ կռուողները։

Առաւօտեան վաղ, Նոր-Շէնի կողմից հազարաւոր թիւրքեր, սալաւաթի սոսկալի աղաղակներով, գրոհ տուին Շան թաղի վրայ.

մեր դիրքերից՝ միայն մի հրացանի փողի համար բացուած անցքերից, որոտացին մեր հրացանները, խուժանը սարսափեց, մի երկու տասնեակ թուրքեր գլորուեցին, թշնամու հաղարաւոր զինդակները ոչ մի ազդաս չտուին մեզ, երբ նա սկսեց աղիողորմ ճիչերով յետ-յետ փախչիլ, Զաքար - Մարտիրոս դուրս եկան փողոց և ընկան փախչող խուժանի յետեւից։ Որոտումներ և գոռում-գոչումներ արձակող խուժանը էլ չկար, ընկածները տակաւին թպրտում էին, մի քանի ժամ անցած նրանց կենդանի բայց վատոգի ընկերները, երկար ձողերի գլուխ ամրացրած երկաթէ կեռերով, քռ-քաշ տալով տարան իրենց դիակները։ Սա առաջին յաղթանակն էր, որի աւետիսը ընդունուեց մեծ ուրախութիւնով։

Որոտումներ լսուել սկսեցին եւ Արարուց դիրքերից, այնտեղ կռիւը աւելի կատաղի էր, թշնամին արեւի առաջին ճառագայթների հետ, Շաքարը իր քրդերի, բաշիբոզուկների և կանոնաւոր զօրքերի ծպտուած խմբի հետ, միանգամից թափուեցին Արարուց փաշի և նախերի փողոցների դիրքերի վրայ, խմբապետ Ուզունի հետ կռուել սկսեցին և Քօչար, Տիգրան, Տրդատ և Զրեան Արշակը, մոլեկրօն մօլլաների մոլեռանդ հետեւորդները արձակեցին հրացանները և առաջացան, բայց մերոնց գնդակները վզվզացին, թշնամին ետ-ետաց, ու ահագին ժխորով յետ փախաւ, դարձեալ քանից աւելի դիակներ թողնելով։

Արարուց դիրքերն էլ յաղթանակը տարել էին։

Զ ա ղ լ ի փողոցի գլխին -փոլիս Աբօենց տան դէմ ու դէմ Թիւթիւնջոնց դիրքը կրեց ծանր յարձակում, Ցանկոյներում և Արարքում պարտուած-փախած զազանները իրենց վրէժը այստեղից առնել էին ուզում, բայց զո՞ր, թշնամու ձեռք առած բոլոր միջոցները, նրա անընդհատ յարձակումները ոչինչի ծառայեցին, դարձեալ պարտուած, զոհերը շալակած՝ յետ ու յետ դարձան Սաադէդդինին պատմելու իրենց . . . ։

Թշնամու յարձակումներին արժանացան և Բնենց, Սահակ-Բէյենց, Սիւնաթջոնց, Գէլոնց և Զաչալ-Միրզենց երկրորդական դիրքերը, ուր յաղթանակը դարձեալ մերոնք են տանում։

Այդեսանը ազատ է՞ր . . . յաղթութեան տօնը տօնւում էր, "Կռուեցէք տղերք"ը, "Ի զէն Հայեր"ը և "Մեր Հայրենիք"ը որոտում էին, ծափի և կեցցէների աղաղակների հետ. զինուորական խմբերի ազատ երթեւեկումը լցնում էր բոլոր սրտերը անսահ-

ման ուրախութեամբ, իսկ որն ամենից քաջալերականն էր՝ դա Վանուհիների բռնած աննման քաջալերական—խրախուսական դիրքն էր, փողոցներում ցնծագին աղաղակներով, սրտաբուղխ օրհնէնքներով, ընդ առաջ էին գալիս մեր քաջերին, համբուրում՝ և օրհնում նրանց. այս բոլորը սքանչելի էր . . . մայրը որդու զէնքերն էր բերում, քոյրը եղբօր թեւին խաչ նշան կարում, ամուսինը սուրը կապում մէջքին, է՛լ ո՞վ սիրտ կանէր կռուից յետ մնալ։

Պարտուած թշնամին ներքին թաղերը քաշուած, ոռնում էր սալաւաթը, արձակում հրացանները, ողբում կորուստը, կառավարութիւնը յաջորդաբար հաղորդում էր պարտութեան լուրը, զինուորական այլ շրջանների փողի անախորժ ձայնի հնչումով, որը լրացնում էր գաղան ամբոխի յօրինած դժոխային երաժշտութեան պակասը.

Կէս օր էր . . . վառօդի ծուխը ամպի փոքրիկ քուլաների վերածուած, երկնքի երեսը կեղտոտել էր սև սև բծերով։

Պատիկ-քն դրչուս վրայ, Դարբնեցոց տան մի սենեակում, մի խումբ մարդիկ աշխատում էին համոզել մի երիտասարդ վեղարաւորի, որ յետ մնայ իր վտանգաւոր մտադրութիւնից, բայց զուր, "Ո՛չ, ասում էր Վարդապետը, անհնար է, թէկուզ ինչ որ էլ լինի, պիտի գնամ, պիտի բողոքեմ, ամօթ է ինձ, նախատինք կկարդան ինձ, եթէ օգնութեան չհասնիմ իմ վտանգուած հօտիս— և կրակ կորած վեղարաւորը դուրս գալով ձի է նստում և մէնմինակ ուղեւորւում դէպի քաղաք—կուսակալի մօտ, բայց հաղիւ խաչ փողոցը անցկացած, զօրքերի գնդակը ցած է գլորում ձիուց հայ վարդապետին, իսկ գաղան բաշիբոզուքները կտոր կտոր են անում նրա մարմինը և շներին կերակուր տալիս։ Այս անձնուրացը, հազուագիւտ մեր հոգեւորական դասակարգումը, Վարագայ Արծուի—Արծուին էր— Դանիէլ Վարդապետը։

Ցաղթութիւններով ուրախ, կռիւներով անվնաս մենք մթնացրինք օրը, թիւրքերից կորուստը հարիւրից անցաւ։ Եկաւ խաղաղ գիշերը, որի անդորրութիւնը վրդովում էր թշնամին իւր բիւրաւոր հրացանների որոտումներով և փողի շարունակական հնչումով։

Մենք այսօր ո՛չ մի զոհ չտուինք անհաւասար կռւում։

ԺԳ.

ԿԱՐՄԻՐ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ

Անպաբնակ Գալիլիայի և հսկայ Սասղկայ բերդի գլխէն աղօթարանը ճողճղուել սկսեց, ոսկի սկաւառակը բարձրացաւ։

Անյաջողութիւններից կատաղած Սասղէղինի կարգադրութեամբ և Շաքըրի հրամանատարութեամբ՝ ստուարացած մի բանակ յարձակում գործեց աղամա՛ծման հետ Արարուց ղիրքերի վրայ, կատաղի ճակատամարտը շարունակուեց մի քանի ժամ, մերոնց դրութիւնը ծանր ու վտանգաւոր էր։ Մուշեղ պահեստի մի գնդով օգնութեան հասաւ, թշնամին թէև տալիս էր բազմաթիւ զոհեր, բայց միևնոյն ժամանակ առաջանալ սկսեց, մեր քաջերը այլևս համբերել չկարողանալով դուրս եկան դաշտը և գնդակներ թափեցին թշնամու սեղմուած շարքերի վրայ, որոնք էլի փախուստի դիմեցին՝ բազմաթիւ զոհեր տալով, մերոնցից մէկը վիրաւորուեց, իսկ մի ուրիշը զոհ գնաց մեր ընկերներից մէկի գնդակին։

Թշնամին դեռ նոր էր հեռացել, երբ մեր ղիրքերի հանդէպ Գուռուպաշից եկող ճանապարհի վրայ շարժուել սկսեց թուրք կողոպտող խմբերի մի ահագին կարաւան, բեռնուած հայ գիւղերի աւարով ու անասուններով։ Մուշեղի հրամանով մի խումբ յարձակուեց նրանց վրայ, թուրքերը անակնկալ պատուհասից զոհահար, աւարը և անասունները թողած հազիւ խոյս տուին, հոգէառ ֆէդայու հոգէհան գնդակների կարկուտից։

Շաքըրի բանակը պարտուած այլ ջոգլ ու արտումը, յարձակում է Թիւթիւնջեան ղիրքի վրայ, կռիւը շարունակում է ժամերով, թշնամին երբ տեսնում է որ չի կարող յաղթել, դիմում է նենգ միջոցի, մի հարիւրապետ մի քանի զինուորներով ուզում է ղիրք մտնել կռիւը դադարեցնելու պատրւակով, նա մերկանում է զէնքերէն, արձակում պաշտօնական սուրը՝ ընդունուելու համար, բայց չի աջողւում։ Թշնամին դարձեալ փախչում է դիակների բեռներով . . .

Ցանկոյների և միւս երկրորդական ղիրքերն էլ յետ են մղում թշնամուն մի քանի անգամ։

Օրը մթնում էր, հայկական ազատ այգեստանը թնդացնում էր օդը ռազմական երգերով. Անհանգիստ էր Սասղէղինը, որը ո՞վ գիտէ ինչ հրէշաւոր մտքերով էր տարուած, ողբ ու կոծի

մէջ էին թուրքերը, լալիս էին իրենց հարիւրաւոր սպաննուածների արիւնշաղախ դիակների վրայ, կապում կապկպում բազմաթիւ վիրաւորուածների վէրքերը, ողբացող թուրքերը, եղերերգող թրքուհիները անիծում էին Սուլթանը և Սաադէդդինը, որ ուղարկում են իրենց սիրելիներին "ջան ֆէդայու գնդակին կերակուր" եւ երգում էին սիրելու մահը, նոյն իսկ յանդիմանում —որ նա չի լսէլ իրեն և գնացել կռուի... "Զէ՞ քեզ ասի —դու մի՛ գնա ֆէդայու դէմ կռուելու, նրա մօսինն անխնայ, կեանքիդ թե՞ն է կտրելու..."։

ԺԴ.

ԿԱՐՄԻՐ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Թշնամին յոգնել էր... է՛լ մինակ կռուել չէր կարողանում, նրա աչքը ճամբին էր, նա սպասում էր քիւրդ աշիրների գալուն։

Հինգշաբթի առաւօտ, Վարագի, Զմզմաղարի, և Ս. Խաչի լեռնալանջերը սկսեցին սեւին տալ, քրդական հեծեալների խմբերը հեռաւոր գաւառներից, անսալով կառավարական հրաւէրին, ըշտապում էին դէպի Վան, կոտորելու և կողոպտելու, նրանց քաղցը դեռ չէր յագեցած բազմաթիւ գիւղերի այրում-կոտորումով, գալիս էին Խ օ ջ ա-հարուստ Վանն էլ այրել-աւերելու... Մինչ մենք նորանոր միջոցներ էինք որոնում քրդական հեծեալներին էլ դիմաղրելու, նրանց զօրութիւնն էլ խորտակելու, նրանց երեւոմով խրախուսուած խուժանը յարձակում գործեց Շան թաղի վրայ և ըստ սովորականին էլի յետ փախաւ, դիակները փողոցի մէջ թաւալգլոր թողած։ Այս ժամանակ մի մօլլա, մի կերպ ներս մտնում է մի հայ տուն, ուր գտնելով մի անպաշտպան հայ աղջիկ, զօրով քարշ է տալիս փողոց, շալակն առած սկսում է փախչել ու իր ընկերների խմբին մօտենալ, դիրքերից մեկումը —Զէյթունցի հաջին նկատում է այս, "Մնաք բարով ընկերնե՛ր, ես գնում եմ" գոռում է ու կայծակի արագութեամբ դուրս սլանում, արհամարհելով թշնամու բազմութիւնը և նրա գնդակների կարկուտի հրեղէն տարափը, նա յանդուգն մօլլային հասնելով սուրը նրա պիղծ կուրծքն է խրում և ազատելով աղջկան՝ առած գալիս է, միւս կողմէն թափւում են նրա վրայ թշնամու գնդակներ, որոնց դէմ կէս ժամէն էլ աւելի կռւում է և ապա յաղթական վերադառնում իր դիրքը։

Քաջ Զէյթունցու գնդակները գլորում են ոտիկան մի զինուորի և վիրաւորում մի երկրորդի։

Մեր մնացեալ դիրքերը խաղաղ էին, խաղաղուեց և՛ Շան թաղը։

Կէս օր էր, ես Շան-թաղի դիրքում սպասում էի խմբապետի կարգադրութեան, այնտեղ անձնուրացներէն մի քանիսը նստած փիլաւ էին ուտում. "Դէ՛, ընկեր Ջան, արի՛ փիլաւ ուտենք, թուրքի արիւնով է, արի տե՛ս, մեր կռուի, մեր օրերի պէս, մեր փիլաւն էլ կարմրին է տալիս, մեր քաջ Տիգրանը իր սպաննած թուրքի արիւնից մի կուց բերեց, մեր փիլաւի վրա ածեց իւղի տեղ" ասաց ընկեր Տրդատը։ Ես էլ արօտ-կարօտ մի բիւրդիւջ առի կարմիր փիլաւից։

Անգլիական Կոնսիւլ Ուիլիամը՝ Ամերիկեան միսիոնար Ռէյնոլդսը այսօր եռանդուն գործունէութեան մէջ էին, նրանք հաւաքում էին Անգլիական դրօշի հովանու տակ երկուշաբթուան կոտորածից ազատուած, կոտորւող թաղերի ազատուած կանանց ու երեխաներին։

Կոնսիւլ Ուիլիամը, մի ոտը Սասդէդղինի դրան, միւսը հայ յեղափոխականների մօտ, աշխատում էր կռիւը դադարեցնել։ Պատուելի Ռէյնոլդսը, կոտորուած թաղերում գործը վերջացրած ընկել էր մեր ազատ թաղերը գուժկան-բօթաբերի ձայնով կանչում էր "Կանայք, անղէն, չկռւող տղամարդիկ, աղջիկներ ու երախաներ թող շտապեն մեր տուն, այնտեղ նրանք ազատ կը մնան Անգլիական դրօշի տակ"։ Ինչո՞ւ, —"Կառավարութիւնը թընդանօթներով ռմբակոծելու, կործանելու է Վանը։ Ե կ է՛ք փ ա խ է ք մ ե զ մ օ տ։

Վերջինք էր, արեւմուտին մերձ, Մ. Ուիլիամ և Պատուելի Ռէյնոլդսը, իրենց մարդասիրական գործը վերջացրած, եկան մեզ մօտ, Շան թաղի գլխաւոր դիրքի, Շմաւոնենց տան դրան առաջ և յայտնեցին որ կարեւոր ասելիքներ ունին մեզ, խմբապետ Շահէնը մի քանի զինուորների ընկերակցութեամբ դուրս եկաւ. Կոնսիւլը սկսեց խօսել յանուն Սասդէդղին փաշայի, և ասաց —

"Եթէ դուք՝ ապստամբներդ անմիջապէս վար չդնէք ձեր զէնքերը և ձեր գլխաւորներին չյանձնէք կառավարութեան, այն ժամանակ կառավարութիւնը կրուպպի թնդանօթներով և իր զինուորական ոյժով հողին հաւասար կանէ ամբողջ Այգեստանը», միսիոնարը

աւելացրեց —"Ինչո՞ւ էք սպաննում, ինչո՞ւ էք վերցրել այդ անիծեալ հրացանները, տուէք կառավարութեան դրանք, վերցրէք այդ վտանգաւոր փափախները ձեր գլխից, ապաւինեցէք սուլթանի ողորմածութեան, և նա ձեզ կեանք կը պարգեւէ", դողդոջուն ձայնով, ամենակեղծաւոր շեշտերով շարունակեց նա — եթէ մի քանի օր էլ շարունակէք կռիւը, Ռուսը կգայ և կը տիրապետէ Հայաստանին, ու վերջին խօսքերը պարզաբանում էին արդէն նրանց յետին մտքերը— նրանց սրտայաւը Հայերի կոտրուիլը չէր, այլ Ռուսի գալը։

Խմբապետ Շահէնը պատասխանեց — "Թէև ես պաշտօն չունեմ ձեզ պատասխանելու, այդ իրաւունքը վերապահուած է մեր պատերազմական բարձրագոյն մարմնին, բայց կասեմ ձեզ պարոններ, որ այսօրուայ մեր կռիւը ապստամբական չէ, այլ պաշտպանողական"—։

Սասդէղլինի պատուիրակները ուղևորուեցին դէպի Թուրքերի Թաղը—էմին էֆէնտիենց տունը, ընկեր անձնուէրներից մէկը կրակեց Հրացանը, որը՝ դժբաղդաբար նշանից—կօնսիլից—վրիպեց, և վերջ չտուեց նրա զզուելի գոյութեան, որը ա՛յնքան աղէտների, ա՛յնքան արիւնի հեղինակներին մատնակից, աջակից եղաւ։ Պատուիրակները այցելեցին և Թիւթիւնջոնց դիրքը և առին միևնոյն պատասխանը։

Պատերազմական ատեանը լսելով այս բոլորը, տեսնելով քաղաք թափուող քուրդերի բազմութիւնը և նախազգալով գալիք մեծ աղէտը, կարգադրեց կտրտել Թաղերի բոլոր ծառերը և թողնել փողոցներում, արգիլելու ձիաւորների մուտքը, բոլորովին հեռուակների յառաջխաղացումը դժուարացնելու համար։ Սղոցները գործել և կացիններ թխթխալ սկսեցին հատաբուն ուռենիների և բարտենիների վրայ. երեկոյեան ուշ բոլոր ծառերը ջարդ ու կտուր գետինն էին պառկել . . .։

ԺԵ.

Համեմատաբար խաղաղ ցերեկուան յաջորդեց մի վրդովուած, փոթորկոտ ու անմատչելի գիշեր, հողմը անհնարին ուժգնութեամբ փչում էր, պատուհանների ապակիները չխչխկում, ծառերի կա-

տարները, կանաչ տերևները սրբելիում՝, շինութիւնները դող-դողում, ճթճթում էին, երկնակամարի աչքերը կուրացել էին, նա՝ սեպ-սև հագած լալիս էր, արցունքի շիթերը քամում էր երկրի երեսը ցողելու։ Սարսափելի գիշեր էր . . . Ես մեր դիրքի բարձր կտուրին, երեսի վրայ ընկած հսկում էի—հերթապահ էի։ Հերի՛ք չէր այս բոլորը, հերի՛ք չէր այս սարսափելի երգը, թշնամու անընդհատ փողհարումը սուր սլաքի պէս ցցւում էր ականջումս, և մի անտանելի սարսուռ մտցնում երակներիս մէջ . . . անօրինակ, անպատմելի գիշեր էր։

Նոր-Շէնի կողմէն, յանկարծ, հազարաւոր հրացանների գոռումը լցրեց օդը, կտրեց քամու ձէնը, գնդակներ անթիւ, անհամար, վզ՛-վզ՛ անելով գլխիս վրայէն անցնում գնում էին։ Հրացանների կրակը, անհուն խաւարի մէջէն, խիտ ծառաստանների արանքէն, մեկ-մէկ հրդեհում էին, պէծին տալիս, վայրկենապէս վարում խաւարը, ապա՝ չքանում, կորչում էին, դարձեալ լուսաւորում, այսպէս շարունակեց երկար ժամանակ, ժամը մահհոտ էր։ Բայց թշնամու արածը կատարեալ յիմարութիւն էր . . .

Անցան ժամեր, սիրեց գերեզմանական խաղաղ լռութիւն։ Նստած սենեակում, ընկեր զինուորների հետ գիշերն ենք անցկացնում, մէկը նստել է, միսը՝ թեկնել, երրորդը՝ եռկարած չոր տախտակի վրայ, հրացանը սիրելու փոխարէն՝ գրկած։ Աղօտափայլ լամբի տխուր լուսով լուսաւորուած, պսպղին էին տալիս նրանց կուրծքերը ծածկող-գարդարող փամփուշտները։ Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ հմայիչ պատկեր։

ԺԶ.

ԿԱՐՄԻՐ ՈՒՐԲԱԹ

Ուրբաթ օրը թուրքերը ընդհանրապէս խաղաղ մնացին, ամբողջ օրը նրանք մէջիդներում գրգռիչ քարոզներ լսելով անցկացրին, երբեմն էլ սալաւաթով հսկայական թափօրներ կազմելով իրենց թաղերում։

Այսօր Անգլիական հիւպատոսը իբրև խաղաղարար-միջնորդ մի քանի անգամ տեսնուեց մեր բարձրագոյն ժողովի և Սասդէդդինի հետ, երկու կողմերի համաձայնութեամբ որոշուեց մի ժողով գումարել, բանակցելու համար։ Ժողովը որոշուեց սկսել կէս օրէն երկու ժամ անցած, հայոց կեդրոնական թաղում։

Որոշուած ժամին հասան—Հայոց առաջնորդ Վարդապետ Բագրեւանդեանը, կուսակալ Նազըմի հետ մի կառքում նստած, չորս հեծեալ ոստիկաններով, Ֆրանսական կառավարութեան ներկայացուցիչ Վարդապետ հայր ղը Ֆրանխս, Պարսկական հիւպատոս՝ Միրզա-Հիւսէյին Խանը, Ռուսաց հիւպատոսի թարգման Կ. Զիլինկարեան, Անգլիական հիւպատոս Մասըր Ուիլիամը, Ամերիկեան միսիոնար բժիշկ Ռէյնոլդսը, Աւետիսեան, Մարտիկ և Պեռոն քառասուն թիկնապահ զինուորներով։

Ժողով-բանակցութիւնները սկսւում են։—Անգլիական հիւպատոսը յայտնում է Սասդէդդինի պաշտօնական զեկոյցը թէ՝ „Նը-կատելով որ հայերը, իրենց 4-5 օրուայ յանդուգն դիմադրութեամբ, միւսլիւմաններին կոտորելով, կառավարութեան դէմ զէնք վերցնելով, լոկ ապստամբներ են օսմանեան կայսրութեան դէմ. կառավարութիւնը այժմ առաջարկում է զէնքերի և յեղափոխականների յանձնումը անյապաղ, հակառակ դէպքում նա թնդանօթներով դուրս կը գայ պատժելու ապստամբներին։

Աւետիսեանը պատասխանում է.—Այսօր մենք ապստամբներ չենք, այդ հաստատում է հէնց մեր կռիւը, երկուշաբթի օր մենք ոչ մի պաշտպանողական միջոց ձեռք չառինք, և թողնք որ կառավարութիւնը պաշտպանէ Հայկավանք, Ս. Յակոբ և միւս թաղերը, խուժան-բաշիբոզուկների աւեր-կոտորումներէն, բայց կառավարութիւնը փոխանակ դրան՝ զէնք, ռազմամթերք բաժանեց դրանց, և իր ծպտուած պաշտօնեաներով առաջնորդեց, իր զօրքերով բազմացրեց նրանց շարքերը, տեսնելով այս՝ մենք չուզեցինք մեր թշուառներին վիճակակից լինել, և անպաշտպաններին թողնել զոհուելու կատաղիների քմահաճոյքին, մենք վճռեցինք դուրս գալ՝ մեր կեանքի գնովը պաշտպանելու տանջուածների կեանքը—որ մեր կեանքն է, ինքնապաշտպանութեան իրաւունքը կարծեմ սրբազրծուած է, պարոննե՛ր, կրկնում եմ, մենք այսօր մղում ենք ինքնապաշտպան կռիւ, թող կառավարութիւնը դադարեցնէ անզէն ժողովրդի կոտորումը, թո՛ղ արգիլէ թալանումը, տների, դպրոցների և եկեղեցիների այրումը, դուք էլ վստահացրէք մեզ, երաշխաւորէք կառավարութեան, այն ժամանակ մենք դուրս կգանք քաղաքէն, և եթէ կուզէ կառավարութիւնը, եթէ կռիւը մեզ հետ է, ապա թող դուրս գայ բաց դաշտում, ազատ լեռներում . . .

Ֆրանսական, Ռուսական և Պարսկական ներկայացուցիչները

ասում են որ իրենք ականատես են եղել անօգնական և անմեղ հայերի կոտորման, որով իրաւացի են գտնում հայ ինքնապաշտպանների դիմադրութիւնը։

—Բայց և այնպէս, ասում է Անգլիական հիւպատոսը—կառավարութիւնը մեզ հետ բոլոր օտարահպատակներին հրաւիրել է բերդ քաշուել, կռիւը շարունակելու դէպքում կը-ըուպպի թնդանօթները գործելու են . . .

—Ինչ էլ որ լինի, ես դուրս չեմ գալ քաղաքէն, և իմ տէրութեան դրօշակի տակ կը մնամ, նրա հովանուն ապաստանած հազարաւոր հայերի հետ, յայտնում է վրդովուած Միրզա-Հիւսէյին Խանը։

Խորհրդակցութիւնը շարունակւում է։ Անգլիական հիւպատոսը որ թագուն մտքերով և Սասդէդդինի առաջարկութեամբ էր սարքել ժողովը, առաջարկում է հետևեալ պայմանները, եւ խոստանում իր Պոլսի դեսպանի միջոցաւ վեց պետութիւնների երաշխաւորութեամբ ընդունել տալ Բ. Դրան. պայմանները հետևեալներն էին—Ա. Հայ հարիւր յեղափոխականների անձնատուր լինելը, Բ. Բոլոր զէնքերի և ռազմամթերքի յանձնումն կառավարութեան, հիւպատոսների ձեռամբ։

Կարծիքների փոխանակութիւնը շարունակւում է երկար, պայմանները քննութեան են առնւում, վերջապէս կռուող կողմերի ընդունելութեամբ և ներկաների համաձայնութեամբ, տրւում են հետևեալ պայմանները—Ա. Երեսուն հայ յեղափոխականների անձնատուր լինելը, որոնց մէջ եղած օտարահպատակները պիտի փոխադրուէին Եւրոպա, իսկ մնացեալները արժանանային Սուլթանի ներման։ Բ. Երեսուն թիւր քէ-քիւրտ բաշիբոզուկների գլխաւորների ձերբակալումն և աքսորումն։ Ժողովը վերջանում է, Անգլիական հիւպատոսը խոստանում է հեռագրել Պոլիս և մինչև երեկոյեան վերջացնել գործը, դադարեցնել կռիւը . . .

Կէս օր էր . . . ես Զաղցկենց դիրքումն էի, երբ անցաւ կուսակալի կառքը, հեծեալ ոստիկանների երկչոտ աչքերը ուղղուած էին դէպի մեզ, ինչպէս վախենում էին հայ գիւղացու պատուհաս հարկահաւաք դաղանները։

Ժողովը-բանակցութիւնները և այս բոլորը մի սոր դաւադրութիւն էր, մի եղեռնական խաղ էր, սարքուած Անգլիական

կառավարութեան ներկայացուցիչ թրքացած և սոր Ուիլիամի եւ Սաադէդդին բորենու կողմէն։

Անամօթ՝ կրած պարտութիւններով, կատաղած՝ սիրելի հաւատակիցների հարիւրաւոր դիակների վրայ, փրփրել, սիրան ու հոգին ժահր թոյնով լցրել, հայերի կորիճ կռուով և դիմացկունութիւնով։ Սաադէդդին և նրա հետ ելլողը շուարել էին, ինչ անելը չգիտէր Մեծ Մարդասպանի հայակեր թիկնապահը, նա խոստացել էր իր սատանաշուք տիրոջ մի քանի ժամուայ մէջ չարդել Վանի անհաւատներին. Այգեստանը աւերակների մի մոխրակոյտ դարձնել, այժմ... Սաադէդդինը խբրև թիւրք, կոտորելու մի ակ պաշտօնով Վան եկած, և վերջապէս մեր ժամանակների ամենահռչակաւոր մարդակերի հարազատ լատուկը լինելով, նա այդպէս պիտի մտածէր, այդպէս պիտի անէր ոճրագործի-դահճապետի պարտականութիւնը այդպէս հոգալ, անհանգիստ լինել էր տրամադրում։ Բայց ի՞նչու էր անհանգիստ Ուիլիամը, Անգլիական կառավարութեան այդ նախատաբեր վիժուածը, նա ի՞նչու էր ձեռք տուել սուլթանի կառավարութեան, իր կառավարութիւնը ա՞յդպէս էր հրահանգել, դա անհաւատալի է, ո՛չ, աւելի իրական է նրա մարդակեր, հայատեաց լինելը, գուցէ և կաշառուած լինելը, նման Եւրոպացի բազմաթիւ հայակերների...

Վանի անցքերի հետ, ինչպէս Սաադէդդինի անունը, նոյնպէս և Ուիլիամի, սերտ կապուած պիտի մնան, ապագայի լաւագոյն սերունդը, եղբայրացած մարդկութիւնը նախատինք պիտի կարդայ, պիտի թքէ արեան-ոճրագործութեան մէջ եղբայրացած երկու հրէշների պժգալի յիշատակին...

Մեղ մօտ ժողովէն յետոյ, եռանդուն մի իրարանցում սկսուեց, Հայրենիքի ազատութեան, եղբայրների անմեղ արեան յորդ հուսումը դադարեցնելու համար, մերոնք բոլորն էլ ցանկութիւն էին յայտնում կառավարութեան յանձնուելու, թէև մենք պատրաստ էինք բոլոր սրտով մինչեւ վերջին շունչը կռուելու, և չէինք կամենալ մեր անշնչացած դիակներին անգամ մերձենալ ատելի թշնամու ձեռքը, բայց... անձնուիրութիւնը—ը՝ն կերին կեանքը տալը, տալիս էր աննման-անօրինակ պտուղներ, որոնց առաջ իւրաքանչիւր գլուխ խոնարհել, երկրպագել կը փափագէր։

Արևը փախաւ, գիշերն եկաւ, խաւարը իր անսահման թևերը թափ տալով հասաւ, միայն Ուիլիամը չեկաւ, պատասխանը չ'ըստացուեց։

Հաշտութեան պայմաններ առաջարկող, պաշտօնական բանակցութիւններ սկսող պետութիւնը գիշերուան խաւարի հետ սկսեց իր խաւար, բայց անմիտ գործը—բիւրաւոր հրացաններ կըրակուեցին, զինուորական բոլոր գիշերապահները փողահարել սկսեցին, գաղանային ժխորի հետ օդը լեցուեց վը՛ղ-վը՛ղների և վո՛ւ-վո՛ւների երգով, կատարեալ պատերազմ էր, պատերազմական դաշտ, իր ամբողջ սարսափով, իր լիացրած սոսկումով, իր անհնան զարդանդով։

Վը՛ղ-վը՛ղ, վո՛ւ-վո՛ւ, սալաւա՛թ, առաւօտը տօն էր, տօն աբիւնհեղութեան, տօն աւերումի, տօն սուլթան Համիտի, այժմ նախատօնն էր կատարուում, հրացաններն ու փողերը երգում էին, վառօղի կրակները լուսափառում ճրագալոյցը։

Մեծ պողոտայէն—քաղաքէն Համուդ-աղենց տուն—Հայրիկենց տան դէմ ու դէմը, երթևեկել սկսեցին ձիաւոր խմբեր, որոնք մեր դիրքերի մօտէն անցնելիս կանչում էին. "Մենք պատական պաշտօնեաներ են, մեզ չխփէք"։ Եթէ գիտենայի՛ն։

Նախատօն, հրավառութիւնը և սուլթանասեղծ երաժշտութիւնը շարունակուեց մինչև լուսադէմը։

ԺԷ.

ԿԱՐՄԻՐ ՇԱԲԱԹ

—Տղե՛րք, ասաց խմբապետը, ի՛ զէն, պատրա՛ստ, հասաւ վըճռական ճակատամարտի ահեղ րոպէն, ցոյց տանք թշնամուն մեր բազկի զօրութիւնը։

Սենեակում՝ մարտի երթալու պատրաստ քաջերը, ուրախ ու անհամբեր սպասում էին կռուի հրաւէր ստանալու ցանկալի րոպէին, նորածին արևը իր առաջնէկ ճառագայթները ուղարկեց մեր սենեակը, նրանք նոր փայլ, նոր պսպղանք տուին զինուորների փամփուշտազարդ կրծքերին, և ջարդ ու փշուր ապակիների կտորտանքներին։

Թնդանօթների որոտումները էլի թնդացրին օդը, տասնեակ հազարաւոր հրացանները միացան նրանց հետ, վառօղի ծուխը ամպացաւ, յունիսեան պայծառ արևի փայլը նսեմացաւ, շինութիւնների և ծառերի գագաթները ծածկուեցին գորշագոյն անթափանց վարագոյրով։

Բիւրաւոր ամբոխը որոտմնալից արձակեց մահմադօ-սալաւաթօ՛ն, կռուի եկած կանոնաւոր զօրքը հնչեցրեց փողը, հիւսիսային, հարաւային և արեւմտեան կողմից կրակ-գնդակ կարկուտ թափուեց Այգեստանի վրայ ...

Մեր բոլոր գիւղերից սուրհանդակներ հասան և պատմեցին իրենց կրած սոսկալի յարձակումների մասին, կանոնաւոր զօրքերի գնդեր առաջնորդում էին բաշիբոզուկների հազարաւորներից բաղկացած խուժանին, լեռնային հինգ թնդանօթներ սեւ-քուի գլխից ռմբակոծում էին Յայնկոյների գիւղերը: Կռիւ էր Յայնկոյներում, կռիւ Արարքում, կռիւ Թիւթիւնջոնց գիւղում:

Պատերազմական ատեանը կեդրոնը փոխադրեց Մեծ Քէնդրչու մօտիկ Ա ղ ւ ա ն ե ա ն ե ն ց տունը, և հրամայեց պահեստի բոլոր գնդերը շարժման մէջ դնել: Մեր գունդ՝ էլ գնաց նոր կեդրոնի մօտ այգում կռուելու:

Թնդանօթները որոտում են, հրացանները վըզ-վըզում, սալաւաթը ոռնում, փողերը ճնգճնգում . . . :

Կռիւը սոսկալի էր Յայնկոյների գիւղերում, հիւսիսից թընդանօթները, նոր Շէնից խուժանը, մեծ-փողոցից հազարապետ Հ ա շ ի մ ը իր զօրքերով, երեք կրակի մէջ էին մնացել, բայց մերոնք անպարտելի, անկորուստ կռուեցին մինչեւ կէսօր, թշնամուց բազմաթիւ դիակներ փռելով, երբ թնդանօթները կործանեցին մեր քաջերի հինգ օր անխորտակելի մնացած Յայնկոյների գիւղերը, մինչեւ այդ ժամանակ խուժան և զօրագնդեր միշտ յարձակուեցին և միշտ յետ դարձան շատ զոհերով, թէ այստեղ, թէ Արարքում և թէ Թիւթիւնջոնց գիւղում:

Յայնկոյների քաջերը թողին իրենց կործանուած գիւղերը, խուժանի և զօրքերի հետ կռուելով եկան հարաւային պատը և ամրացան Խ ո տ ի - Մ կ ա ն ց, Վ ո ւ վ ո ւ ն կ ա ն ց, Ն ա ռ օ ե ն ց, և Զ ղ օ ե ն ց գ ի ւ ղ ե ր ո ւ մ:

Կատղել էր հազարապետ Հաշիմը, սպանուում էին հարիւրապետներ, սպանուում սպաներ, կոտորուում զօրքեր: Հրդեհուել և բոցավառուել էր մերոնց սրտերը, թշնամու անամօթութեան և վայրագութեան ծայրայեղութիւնը վառել բորբոքել վրէժխնդրութեան կրակը: Մեր գնդակներից և ոչ մէկը գետին չէր ընկնում, մինչ թշնամու անթիւ գնդակներին վիճակուած էր օդումը վազվզել միայն:

Զեկա՞ն . . . ամբողջ հինգ օր էր իւրաքանչիւր հայ մարդ հարցնում էր . . . ինչո՞ւ են ուշանում, միթէ չեն լսել . . . ա՜խ

. . . եթէ գայ՞ն, եթէ հասնէ՞ն։ Ուրմն էր սպասում Վանեցին, ո՞վքեր էին եկողները, այո, նա սպասում էր, նրա աչքը ճամբին էր, նրան խոստացել էին —Գարեգինի խումբը պիտի գար, Նիկոլ-Շէրօն պիտի հասնէին . . . Սալմաստում կազմ և պատրաստ հազարաւորներ պիտի գային, բայց աւա՜ղ, գացող չկար, հասնող չկար . . .։

Խուժանի յարձակումները չէին դադարում Արարատ և Թիւթիւնջոնց դիրքերից, թէև դժուար էր մեր այդ շրջանի կռուողների գործը, բայց ոչ Յայնկոյների պէս, ուր՝ խուժանի հետ էր և՛ հազարապետ Հաշիմը և՛ աւերող թնդանօթները։

Թշնամին տիրացաւ մեր թողած դիրքերին, սկսեց կողոպտել և այրել տիրած թաղերը, իր ուժը կեդրոնացրեց Համուդ աղենց տանը, թնդանօթները բերեց Նառէնց դիրքի դէմ ու դէմ Կուռուզենց դուռը, և Խոտի Մկանց դիրքի հանդէպ, Պողպտի Դարի Կաղինօի մօտ, 15, 20 քայլից հարուածել սկսեց մեր դիրքերը, կռիւը ահռելի էր . . . ճակատամարտը անհաւասար, կռուողները ահե՞ղ . . . բայց մեր փոյթը չէր.— թո՛ղ թափուին գնդակներ, թո՛ղ որոտան թնդանօթներ, թո՛ղ պոռպռան սալաւաթը, մենք դրանց կը պատասխանենք մեր հրացանների գնդակներով, որոնք շատ են սիրում մեր թշնամուն, մենք կը ծաղրենք թշնամուն, մեր "Դէ՛, կռուեցէք տղերք"ի կենսալից, խրախուսիչ երգի սրտաթունդ երգումով, թող կատղի գաղանը . . .։

Իւրաքանչիւր զոհի, պարտութեան վրէժը թշնամին առնում էր իր ձեռքն ընկած տներից և շինութիւններից նրանց հրդեհելով։ Սև-քուի և իր կողքի բլրաշարքերի լանջերը ծածկուեցին անհամար հեծեալներով, Յայնկոյների եւ՛ եղեցին կողոպտած, եկեղեցական զգեստներով պճնուած քիւրդ բէկերը, խաչ—խաչվառներով, սրարշաւ, թափօր էին տալիս, յաղթական լո՛-լո՛ներով իրենց աւար կողոպուտի վրայ ուրախանում։ Հրդեհը բռնեց եկեղեցին, ուսումնարան Շան-խէրանի, Դարի գլխի, Շաղոյենց թաղի տները, բոց - ծուխ բարձրացաւ և Հայրիկենց տնից, Հայրիկաշէն լիգական ուսումնարանից, ծուխը պա՛ռ—պա՛ռ բարձրանում էր, շէ՛կ-շէ՛կ հրեղէն լեզուները գալար գալար թռչում էին, ծուխի ամպը բռնեց արեւի երեսը. գաղանը փորձում էր, երկնքի ճրագն էլ մարել։

Կրա՛կ, արիւ՛ն և մա՛հ . . . բայց վերջին երկուսը թշնամու բաժինն էր։

Մինչ թշնամին հրեղէն կարկուտներ էր թափում, հրդեհում ու հրկիզում, թնդանօթներով գետինը դողացնում, եւ իր ահագին զօրութեամբ Շ ա ղ օ ե ն ց ե ր կ ո ւ ա չ ք ա ն ի կ ո յ ր ի ն էր ս պ ա ն ն ո ւ մ, մեր պատերազմական ատեանը Աղանեանենց տանը կազմած գայտնի ժողովում-նկատելով այս բոլորը, և հասկանալով գալիք աղէտի ծանրութիւնը, Աւետիսեան, Մարտիկ և Պեսոն մի վերջնագրով դիմեցին Անգղիական հիւպատոսին—այդ վերջնագրում այպանելով օսմանեան նենգութիւնը, նրա խարդախութիւնը, նրանք յայտնեցին որ "իրենք իրենց կռուող ընկերներով դուրս կգան Վանից, թող կառավարութիւնը թողնէ անմեղ ժողովրդի կոտորումը և գայ լեռներում իրենց հետ կռուէ"։

Մեր նոր բռնած Զօենց դիրքը, երկու ժամ անընդհատ ճակատելով քսան քայլ հեռու Համուդ աղենց տանը բանակած թշնամու դէմը, երեք կողմից կրակի մէջ մնալով, քիչ էր մնում իր մէջի կռուողներով զոհ գնար թշնամուն, բայց մերոնք խիստ ճարպիկութեամբ թողին վտանգուած դիրքը և եկան միացան Աւղանեանենց այդում կռուող ընկերների խմբին։

Խոսի-Մկանց դիրքի կռուողները ինքնապաշտպանութեան գործը տանում էին հերոսաբար, նրանցից իւրաքանչիւրը դիմադրում էր թշնամու հազարին, ամբողջ խումբը քսան քայլից հարուածող երեք թնդանօթներին։

Նառօենց և Հիւսենց դիրքից, Գրիգորիս Աւետիսեան, Մհերտիգրան, Սանոեաններ, Գաբլօն և Աշջեան Գէորգը կռւում էին դիւցազնաբար, երեք թնդանօթների և խուժանի դէմ։ Լայն փողոցի յատակի վրայ, թպրտում էին թշնամու բազմաթիւ դիակները, առուներից թիւրքի արիւնն էր վազում . . .։

Մեզ ոտ էր թւում նահատակութեան ժամը, մենք մէկ համբուրւում էինք, մէկ հրացանը նշանի բռնում, ապա նպատակին հասած գնդակի ուրախութիւնից էլի համբուրւում, էլի նշանի մտնում, դարձեալ գրկախառնւում և "մնաս բարեւ" ասում—անմոռանալի՛ վայրկեաններ։

Հազարապետ Հաշիմը իր թիկնապահներով գրաւեց Նառօենց դիրքի դէմ Տէր Խաչատուրենց կազինօն, որտեղէն նեղել սկսեց մեր դիրքը, մինչ մեր միւս կռուողները իրենց անվրէպ գնդակներով գլորել էին աւելի քան քսան թնդանօթաձիգների և մէկ հարիւրապետի, այնպէս որ էլ ոչ ոք սիրտ չէր անում մօտենալ թնդանօթներին, փողոցումը վխտացող խուժան էլ փախաւ, թնդանօթները մնացին անտէր . . . այս լուրը—թնդանօթների գրաւումը— կայծակի արագութեամբ տարածուեց,

ուրախացած բազմությունը՝ դեպի Խոսրով-Մկանց գերդաստանը շտապում էր, թնդանոթները և նրանց անտեր թողնող քաջերը տեսնելու։ Թէև ո՛չ մի դժուարություն չէր ներկայացնում թնդանոթներին մօտենալ և նրանց մեզ մօտ բերել, բայց այդ թոյլ չտուեց անել պատերազմական առեանը . . .

Թշնամին Համուդաղենց տնէն խուժեց, որոտացին թնդանոթները, գոռացին հրացանները, ոռնացին սալաւաթը, լայն փողոցը ծածկուեց թշնամու բանակով, զօրքերի կարմիր-սև պոչաւոր ֆէսերը, քիւրտերի սեւ-սպիտակ քօլոները օրօրալ սկսեցին, մարդկանց ահագին բազմությունը ծփուն-անցնում էր փողոցում, մեր գնդակների գործը հեշտ էր—կերակուրը առատ։ Այս միջոցին մի անահ երիտասարդ, վրէժխնդրության կրակը սրտում, բանտային տանջանքները և շղթաները չմոռացած — մ ն ա ք բ ա ր ի ա խ բ է ր ն ե՛ ր, կանչեց ու դուրս թռաւ փողոցը, քաջը աներկիւղ վազեց թիւրքերի վրայ, սպաննեց թշնամուց երեքին և ապա ինքն էլ ինկաւ անկենդան, գնդակի վերքը սրտէն, Նառօենց զբուան առաջ եղաւ նորա գերեզմանը։ Ցանդուգն անձնուէրը Աշջեան Գէորգն էր, խրախուսիչ և յուզիչ, օրինակելի էր նրա արարքը, որ և անմիջապէս յետոյ ունեցաւ իր հետեւողները։ Տիգրան, Շահէն, Կարօն մի տասնեակ ընկերներով դուրս եկան լայն փողոցը, ոմանք ծառերի յետեւէն, ոմանք առունների հունը մտած մի մասն էլ հէնց գետնի վրայ պառկած հարուածել ընկլսեցին թշնամու խուցացած շարքերը, դիակները մէկը միւսի յետեւէն փռուեցին, մերոնք յառաջացան, թշնամին էլի խոյս տուեց, այդ միջոցին մերոնք ապահովուած իրենց թիկունքէն, փողոցի կողմէն պաշարեցին Տէր Խաչատուրենց կալնոն, և պատուհաններէն գնդակներ տեղացին հազարապետ Հաշիմի և իր զօրքերի գլխին, Հաշիմը լեղապատառ հազիւ ազատուեց այդիներէն խոյս տալով, կալնոում թողնելով տասնեւհինգ անշնչացած զինուորները, մերոնք մտան այդ տեղ և վերցրին զօրքերի հրացանները, մինչ Մէլեան Տիգրանը, իր մէկ դոհի կողքը ճեղքածը նրա վերքից արիւն էր խմում։

Կէս օր էր . . . ծուխը պալա՛ն պալա՛ն բարձրանում էր, թնդանոթները որոտում էին . . . Սասդէղինը կատաղել էր, ինքը անձամբ եկե՛լ էր ղեկավարելու կռիւը, և հրամայել բերդէն իջեցնելու կրուպպի թնդանոթները. թշնամին էլի գոհ տուեց երեք չորս կէտերէն, Համուդաղենց տնէն, Աղւականց փողոցի գլխէն, Համուդաղենց այգուց, Զչօենց և Ջալաղենց այգիներէն, այս

ժամանակ Մարտիկը՝ Ոզմցի Վանիկի, Պուլուզի, Բաշկալանցեան Տիգրանի և Նշանի հետ դուրս եկան Աղւականց փողոցը՝ Բաղկանց դռան առաջ, արգիլեց թշնամու յառաջացումը, մինչև երեկոյ այնտեղ կռուելով։ Աւետիսեանը, Սև-Լաճի, Օտեանի, Սեմի, Մանօի-Աւդօի և ընկերների հետ մտաւ Համուդաղենց այգին, որ թատունկի բեռնակները պատնէշ դարձած դիմադրում էր Համուդաղենց տնէն և այգիէն խուժող խմբերի դէմ։ Պեռօն, Աբգանազ, Ազդէն և Եղիազարը բազմաթիւ ընկերներով կռւում էին Աղւականց այգու պատերէն, Զչօենց և Ջալաղենց այգիէն դրսհ ուռող թշնամու դէմ։

Մեր կռուողների քաջութիւնը աննկարագրելի էր, մինչ մէկը կռւում էր, մի խումբը երգում էր, երրորդը պարում ու թռչկոտում, մինչ թշնամին զբաղուած էր ապաննուածների դիակները քաշկռտելով։

—Տղե՛րք, կանչեց կռուողներէն մէկը— տեսէք էն գօրքը ինչպէս է քաշում իր անշնչացած ընկերոջ դիակը, ո՞վ կարող է նրան էլ ուղարկել Մահմէտի գիրկը,— ընկաւ նա էլ, երրորդն էլ, չորրորդն էլ։

Մարտը ահեղ էր, այժը անհաւասար, թշնամին երկչոտ, մենք կորովի, անվհատ։

"Ամենայն տեղ ճահը մի է"

Մեր թաղերը հեռդհեռէ դատարկուեցին, բոլորը գնացին բողքականների մօտ, թշնամին կռւում էր, հ՛ա կռւում, կրակում, ու որոտում։ Մարտիկի գինակիցներէն մէկին մատը, մի ուրիշի գլխարկը կերաւ թշնամու գնդակը, թշնամուն աջողուեց Բաղկանց պարտէզը մտնել և վտանգաւոր դրութեան մէջ դնել Աւետիսեանին, բայց Սև-Լաճը և Զէյթունցին ազատեցին նրան, հալածելով թուրքերին։

Մեր յաջող թիւնները դայրացնում՝ են և Թէմուր-Զաղէ Ղալը փաշային, որն հրամայում է կոտորել ամեն տեղեռնական անզուգական կերպով, Հայկալանքէն և այլ թաղերէն իր տանն ապատանած երկու հարիւր ոդամարդկանց, նրանց կանանց ու երեխաների աչքի առաջ, այրելով, մորթաղերծ անելով յօշ-յօշ կտրտելով նրանց, ականատեսների արիւնը սառում է երակներում, խաշւում է սրտերը, երեխաները ճիչ են բարձրացնում։ Թշնամին շարունակեց իր կռիւը մինչեւ արեւմուտը, որ ժամանակ սկսեց հեռդհեռէ թուլանալ և վերջապէս խսպառ դադարեց։ Թնդանօթներով և զօրաբանակով էլ պարտուեց թշնամին, բոլոր դիրքերն

էլ դիմադրեցին մինչեւ երեկոյ, կորցնելով Աշջեան իր յանդգնութեան զոհ, Խոսի-Մկանց գիրքում մի պատանի իր անզգուշութեան զոհ, մի մատ և մի գլխարկ, մինչ թշնամին միայն ցայնկոյսների շրջանում թողել էր 250-300 դիակներ և այս թուի կրկնապատիկը վիրաւորներ դաշտում։

ԺԸ.

Սիրած Հայրենիքի, պաշտած-տանջուած ժողովրդի պահանջը անդիմադրելի էր, կռիւը էլ շարունակել ինքնաբեր ու աննպատակ, պատերազմական ատեանը արդէն նախապէս կարգադրել էր քաղաքէն հեռանալու պատրաստուել։

Ինքնապաշտպան բոլոր քաջերը խմբուեցին Մեծ-Քէնդրջին։ Մի երկու ժամէն նրանք արդէն պատրաստ էին ճանապարհ ընկնելու . . .

Հասաւ ուղեւորուելու ժամը . . .

Խմբերը շարժուել սկսեցին դէպի Վարագայ Սարը։ Մթութեան մէջ գնացողները և մնացողները գրկախառն, տալիս էին իրենց վերջին համբոյրները, "մնաս բարե„ները ընդհատուում էին խուլ հեկեկումներով։

Վանի հայութեան պատիւն ու կեանքը իրենց արիւնով գընողները գնացին . . .

Վանում առաջին Կարմիր օրերը վերջացան։

1850

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Մենք փախչում էինք . . . գնում էինք այգիներով, ուր՝ անթափանց խաւարը իր կատարեալ զօրութիւնը հանդէս էր բերել, ծառեր, թփեր, որդերի թումբ-բեռնակներ ասես դ ե ւ ե ր լինէին, որոնք թշնամու հետ միացած մեզ էին հետամուտ լինում . . . ա՜խ, ի՜նչպէս վատ է լինում կռուից յետոյ խաւար գիշերը։ Մըթութեան միջից, կարծես դարանակալ թշնամիները քչփչում լինէին, ծառերի քամուց տարուբերուիլը, տերևների մեղմ սօսափիւնը հէնց իմանաս մարդկային լռիկ խորհրդակցութիւն լինէր. ըշտապելուց ընկնում, սայթաքում էինք, կարծես մէկը յետևից մեզ չէր թողնում, կամ մի ուրիշը դիտմամբ խոչնդոտ քար էր նետում մեր ոտքի վրայ ու ընկնելով կանգնելով առաջանում էինք։ Մեր Շատխու գ ի տ ո ս ի կ ն ե ր ն (1) են ասել—չ ի ն ե ս չ կ ա յ ն ե ս, մ ա ր դ չ ե ս է լ ն ե։

Կռիւ սկսելու օրից, բացի կռուողների ծնողներից և նրանց այլ մերձաւորներից, մնացած հայ հասարակութեան մեծագոյն մասը ապաստանել էր Պարսից, Անգլիացոց և Ռուսաց հիւպատոսարանները, բողոքական և կաթոլիկ միսիոնարների շինութիւնների և սրանց անմիջապէս յաջորդող այլ հիմնարկութիւնների ու այգիների մէջ։ Բազմութեան ամենամեծ մասը լցուել էր բո-

(1) Շատխու գիտոսիկներ—այսինքն Շատախ աւանի գիտունները, որոնք այստեղակ ասացուածների հեղինակներ են համարւում Վասպուրականում։

ղոքականների ընդարձակ բնակարաններում եղած թագաւորներում սորեկրեայ ջրանցքներում, ու աւերուածականներում։

Դրութիւնը ճգնաժամային էր։

Պահապան հրեշտակները, յոյս ու ոգևորութիւն ներշնչող քաջերը հեռացել էին։ Ո՞վ պիտի պաշտպանէր անզէն ժողովուրդը, երբ բռնապետութիւնը, բարբարոսութիւնը այս անգամ էլ դրժել էր իր խոստումը։ Բռնապետութիւնը խոստումի սրբութիւն չի ճանաչում։

Հայաբնակ բոլոր թաղերը ամայացան, կենդանի շունչ չկար քաղաքի անտիրական անասուններից, որոնք զդալով դրութեան սոսկալի տարօրինակութիւնը՝ ասես տխրել ու տրտմել էին։

Սարեր-քարերն անգամ տխուր էին։

Մարդից յետոյ՝ ճարտարապետը ահալի կլինի։

Այդ գիշեր, որ կիրակնամուտ էր, երկնքի աչքերը կուրացել էին, երկիրը փորձում էր նրա տեղը բռնել, ճրագներ վառել, հրդեհուած տները դեռ ծխրկտում էին, երբեմն հրեղէն ժայթքումներ վեր-վեր էին բարձրանում՝ գալարուելով ալեկոծ ծովի փոթորկոտ ծոցում խեղդամահ եղողի նման, պէծին պէծին կայծիկները թըռվըռում էին խաւարի մէջ, ուր դարձեալ ընկնում ու հանգչում էին։

Թշնամին էլի չէր դադարում հրացանաձգութիւն անելուց. սև էր էն գիշերը։

Կիրակին լուսացաւ։

Թշնամին թէև գիտակ յեղափոխականների քաղաքից հեռանալուն, բայց էլի՛ սիրտ չէր անում ներքին թաղերը մտնել, թալանում էին իրենց տիրած թաղերը և հրդեհում անխնայ։

Վախեցողի համար սպառողական դրութիւնը ամենասոսկալին է, մանաւանդ երբ նա իրեն բոլորովին անպաշտպան է զգում, եւ գլխին գալիքը սոսկապէս չգիտէ։

Այժմ գնանք փախստականների մօտ, նրանց բաղմութեան ապաստարան բողոքականների տունը։ Երէկ մենք հ ա ր ս ա ն ք ա ւ ո ր ն ե ր էինք, այսօր յուղարկաւորներ, չէ՛ որ սրանք միշտ միմեանց յաջորդում են առանց ժամանակը գիտնալու։

Ի՞նչ է այս։

Բակեր, պարտէզներ, մարդեր, անցքեր, առուներ և նոյն իսկ պատեր ծածկուած են խայտաճամուկ մի բաղմութեամբ. ա՜յնպէս են լեցուել ու միմեանց վրայ ճխտուել, որ ասեղ գցես գետին չի ընկնի։ Տեսարաններ ա՜յնքան շատ, ազմուկ ու ժխոր ա՜յնպէս

խլացուցիչ, որ աչք չգիտէ որի՞ն նայէ, ականջը՝ որի՞ն լսէ։

Բազմութիւնը ծփում է։

Մէկին լացը, միւսի՝ ճիչը, երրորդի՝ հեծկլտոցը, չորրորդի՝ հառաչանքը, հինգերորդի՝ վայնասունը, խմբական ողբը որոտում ու գոռում է, ասես մի երկիր են թաղում, իսկ մերթ մերթ, որպէս մի ղիլ զանգակ, հնչում է մանրիկների աղաչական աղաղակները, մայրի՛կ հայ տո՛ւր, հայրի՛կ պապէրն ո՞ւր է,—աղաղակներ, որոնք կայծակի պէս շեշտակի մտնելով մարդու ականջների մէջ, ոժժալով մտնում են նրա գլուխն ու սիրտը։

Կենդանի, բայց կիսամեռ մարդիկ, բոկոտն, կիսամերկ, որպէս երկրաշարժից հիմնայատակ մի հսկայ քաղաքի աւերակներ, ընկել են միմեանց վրայ, հէնց գերեզմաններից նոր դուրս եկած մեռելների նման, դէմքերը խապտռ դեղնած կամ կապտած, աչքերը խորն ընկած ու ջրակալած, ձեռները խաչած ու կծկած կուրծքի վրայ, գլխակախ, իսկ սրտերը, ա՜խ սրտերից արիւն կերթայ . . . Զուրտ՛ւմ, քո տուն պ ր ի շ ա կ։

Ի՞նչ պիտի լինի, մենք իսկի չգիտենք։

Մէկ աչք արևելք—Վարագի բարձունքին ուղղել, երանի են տալիս էնտեղ թառած քաջերին և ցանկանում սրտի ամբողջ կորովի փափագով գնալ միանալ նրանց, գոնէ նրանց հետ մեռնելու գերագոյն երջանկութիւնը ունենալ։ Մէկ աչքը մեր շրջապատն է մնացել, ականջների հետ անհամբեր և երկչոտ ըսպասողութեամբ, թէ երբ կը շարժուի թշնամին, ե՞րբ կը գայ նա, ի՞նչ կանէ, մենք ի՞նչ պիտի անենք, ահա՛ հարցեր և անուանելի հարցեր։

Վա՜յ, հազա՜ր վայ, էն ժամին։

Ահա երևաց պ ա տ ո ւ ե լ ի ն—Դօկ. Ռէյնօլդսը, որ աւելի քան զբաղուած էր իսկական հաւատացեալներին—եղբայրներին սենեակներում և աւելի լաւագոյն տեղերում պահելու՝ նրանց հանգիստ տալու գործով։ Ահա նա, ինչպէս մեզանում սովորութիւն է ասել՝ երկճիւղ միրուքը քամուն տուած, խորն ընկած աչքերը պլսուած, մէջքը քիչ կռացած՝ եկաւ շրջելու, բայց նա մինակ չէ. երկու զինուոր էլ ունի իր հետ, որոնց կարմիր ֆէսերը է՛լ աւելի սոսկալի են քան իրենց դաժան դէմքերը,—ի՞նչ կայ, իւրաքանչիւր ոք հարց է տալիս,—պատուելին ինչո՞ւ է զինուորներով մտնում գալիս իր սեպհական տան մէջ։

Եկաւ նա, խաղաղութեան, ապահովութեան աւետի՞ն է բե-

ել, թէ նոր դժբազդութեան, նոր սարսափների բօթը. նա աւետաբեր չէր։

Ու սկսաւ նա ,պատուելիներին յատուկ, իբր թէ հեղահամբոյր մի տօնով.—"Ձեզ եմ ասում հայեր, ձեր մեծ աւազակներ, երկնից անէծքին ու պատուհասին արժանի յեղափոխականներ կան, որոնք պատճառ դարձան այսքան անմեղ արիւնհեղութեան, նրանց ցոյց տուէք և կամ դուրս արէք, ապա թէ ոչ ձեզ բոլորիդ էլ կը կոտորեն, մենք անկարող ենք այդ դէպքում ձեզ պաշտպանել»։—Սատակագոյն սոսկումը տիրեց, դարձեալ ծայրայեղ բարբարոսութեան մի խաղ, մի մարդակեր խաղ, որն՝ աւա՜ղ, Սաադէդդինի հետ խաղում էին Անգլիական հիւպատոսը և պատուելի Ռէյնօլդսը։

Այդ ժամանակ մի խումբ քաղաքացիներ դիմեցին նրան ասելով՝—"Յեղափոխական կռուողներ հրէ՛ն Վարագայ սարումն են. այստեղ խաղաղ մարդիկ ենք, ձեր պաշտպանութեանն ենք ապաստանել»։

Անցաւ մի քանի ժամ։

Յունիսի միջօրէի արևը խաշում էր, բացօդեայ հասարակութիւնը տապակւում էր բորբոքուած կրակի վրայ եռացող կաթսայի նման, վերևից արև, կողքերից կենդանական տաքութիւն, տակից ջերմութիւնը, օ՜հ անտանելի էր, երանի՜ մեռնող ապստամբներին։

Ապա քաղցածութիւնը ու ծարաւի պապակը!

Երկինքը, որ բաց աչքերով, անծածկոյթ ու անվարագոյր այս թշուառութիւնը տեսնում էր, խակի չէր էլ ամաչում։

Խուզարկութիւն կայ, շշնչում էին մարդիկ, փսփսում էին միմեանց ականջներին։

Էլի՛ եկաւ պատուելին, հիւպատոսի եւ մի խումբ զինուորների հետ, ու սկսեց նախնական խուզարկութեան։

Օկզբում հետամուտ եղան երիտասարդներին ու պատանիներին, և նրանց մտրակների ու սուլիների հարուածների տակ դուրս վռնտել սկսեցին։

Գուժկան խուզարկուները շրջում էին շտապ շտապ, հսկայական մարդակոյտը աւելի աղմկելով ու վրդովելով. երբ թնդանօթի բոմբիւնը ու նրա գնդակի պայթիւնը որոտաց, ցնցուեց աղմկլուղ ամբոխը և դողա՜ց, կանանց լացով ու փոքրիկների աղիողորմ ճիչերով արձագանգելով հրանօթի գոռումին։

Այժմ սկսեցին ժողովել հասակաւոր տղամարդկանց, որոնց հիւ-

պատոս ու պատուելին առաջարկեցին ստորագրել մի ուղերձ, մատուցանելու յոտս Նորին Արքայական Բարձրութեան Օգոստափառ Սուլթան Համիտի գահոյքին. այդ ուղերձում, ինչպէս ընդունուած է, Աստուածային ոյժ ու կարողութիւն, առողջութիւն և կեանք խնդրուած էր Հայրախնամ Կայսեր, ապա անհուն շնորհակալիք Սաադէդդինին, որ պատժել էր ապստամբ սրիկաներին և աշխատել խաղաղութիւնը վերականգնել։ Թնդանօթի կապելու, և մէկմէկ կտրտելու սպառնալիքի տակ, ստորագրելտուին շատերին և գոհ սրտով երկու հրէշները վզզացին Սաադէդդինի մօտ, դարձեալ նոր բան բերելու։

Շատերն արդէն սկսան հանգստանալ, ասում էին է՛լ բան չի լինելու։ Բայց սխալւում էին։

Բ.

"Տասից ութսուն տարեկան բոլոր արուները դուրս մեր շրջապատից, շո՛ւտ, ապա թէ այստեղ կը գան բոլորիդ էլ կը կոտրեն, արունե՛ր դուրս, արունե՛ր դուրս„։

Գուժկանը կանչեց, սուլիները շողշողալով պտտել սկսան օդի մէջ, մտրակները օդում գալարուելով շուացին, հրացանների կոթերը ուժգին հարուածներով շրխկացին, ծեծում էին անխնայ ու դուրս խրկում, բարձրացաւ անպատմելի ողբ ու կոծ, մայրերը չէին բաժանւում զաւակներից, քոյրերը՝ եղբայրներից, նորահարսերը՝ փեսաներից, միմեանց ճտոզն էին պլլում, Պատուելու ոտներն էին ընկնում, համբուրում, գետնի հողը գլխներին շաղ տալիս, ախր ի՞նչպէս բաժանուէին։ "Ամա՛ն Աստուած, դո՛ւ մեզ խղճա, ի՞նչպէս թողնեմ ազիզ բալէս, թարլան ջահէլս, աչքիս լոյսը, սրտիս սիւնը, մինակ տանեն գէլու բերան, չէ՛, չե՛մ թողնի՛, ես՝էլ կը գնամ, ինձ էլ, ինձ քամբախտիս էլ, տնաքանդիս էլ տարէք„, աղաղակում էին մայրերը, գետին փռուած, հողը չանկռտելով։

Բոլորը անիծում էին, ճիտ էին հանում նրանց—գուժկանների յետևից։

Ճարպիկ կանայք վերմակ-դօշակի ծալքերում փաթաթում ու պահում էին իրենց սիրելիներին, իսկ շատ կիներ անհուն արհամարհանքի մի հայեացք ձգելով հալածողների երեսին՝ հեռանում էին իրենց սիրելիների հետ։

"Աւելի լաւ էր դրսում—ընդարձակ ու ազատ դաշտում ապանոնուել»:

Սուլիններ ու ճարակներ շարունակում էին հարուածել, չարոգիների ցուցմամբ:

Արուները բոլորը դուրս էին արուած:

Վռնտուածների մի քանի խմբեր ուղղուեցին դէպի Վարագայ:

Վարագ գնացողների մեծագոյն մասը, բայց դաշտում թշնամու շրջուն հրոսակներին հանդիպելով Կարմրուրի տակ, Սօսօի լճեր, Սուրբ-խաչ, Շուշանց, Կուռուպաշ ու Զուիկ աղբիւր՝ գտան ամենասոսկալի վախճան: Կիսամեռ ու վիրաւոր արեւի կիզիչ ճառագայթների տակ, գետին չանկռտեցին, իրենց արիւնը լկեցին, մա՛հ կանչելով:

Արևն վախից փախաւ, շտապելուց քրտնեց նա, սիրտը թունդ եկաւ. հեւ ի հեւ վազելէն երկինք սև կապեց, ու ահեղ ձայնով որոտալ սկսաւ, առուները կրծոտացրեց, կայծակներ թռան, աչքերը բացեց՝ փայլակներ սուրացին, դարձեա՛լ որոտաց, էլի շըփ-շըփաց, կրկին գիգիաց ու կատաղութիւնից լաց եղաւ, արցունքի գայլակները չոչռացին, ապա կարկուտի հետ չխչխկալով թափուել սկսեց, ինչո՞ւ էր լալիս երկինքը, ա՛հ նրա կոկորդիլոսի արցունքը, որ անխնայ և անխորհուրդ, բացօդեայ ու անծածկ բիւրաւոր փախստականներին, թրջելով ուղ-ուղ՝ էլի գոհ չեղաւ, թշնամու պակասը իր կարկուտի գնդակներով, լրացրեց:

գ.

Երկուշաբթի առաւօտ, թշնամին հաւատարիմ իր խոստում դրժելու սովորութեան, հարիւրաւոր խմբերով, էշերի, ձիերի եւ եզների մի ահագին բազմութեան ընկերակցութեամբ—խուժեց այս անգամ անբնակ ու անպաշտպան թաղերը թալանելով ու կողոպտելով պատահած իրը, ջարդելով ու փշրելով դռներ, պատուհաններ, և զժուարատար ամաններ: Կէս օրից յետոյ նրանք հասանելիաշէն, Անգլ. հիւպատոսի տան ծառերը՝ Անգլ. հիւպատոսը կարծիր թէս զբաղեին կատաղ բարձրացաւ ու սկսեց գնդակահարել հեռացող խմբերին:

Երեկոյեան դէմ, երբ խուժանը իր գործը տեսել-պրծել էր, երբ էլ բան չէր մնում անելու, մինչև այդ ժամ թալանողներին առաջնորդող զօրքերը, յանկարծ խուժան հալածող դարձան, եկաւ և Սասդէղինը բազմաթիւ ձիաւոր հետևորդներով: Սասդէղ-

դինը հրճուելով ձիով տեսաւ իր աւերը, իր սխրագործութեան արդիւնքը, երբ վերջին անգամ դարձեալ կատարեալ չեղաւ նրա հրճուանքը, նա դարձեալ ստիպուեց տեղի տալ, անհնար լինելով ճանապարհը շարունակել, առակերտ պատնէշներից, նա ցած իջաւ ձիից և ոտով շրջեց։ Նա ուշի ուշով հետևում էր դիրքերով և պատնէշներով ամրացրած տներին, խուզարկել էր տալիս ու արձանագրում։ Միևնոյն ժամանակ, նա խապառ դաժան ու կատաղի, ասում էր որ անհաւատ-անհաւատարիմները թող իրենց տներն գնան, էլ բան չկայ, մենք ներում ենք կայսեր հրամանով

Դ.

Ըստ երևոյթին սարսափի օրերն անցան։

Կռիւ-կոտորածի աւերը ահագին էր, բացի ծարդկային կոտրածներից, այրուած էին բազմաթիւ տներ, կողոպտուած՝ ամբող չ թաղեր։ Հազարաւորներ անտուն-անտեղ էին մնացել, տասնեակ հազարներ անօթի ու ծարաւ, այս դեռ հերիք չէր, աչքից հեռու գաւառներից՝ կոտորուելուց ազատուած, բայց խապառ կողոպտուած գիւղացիք, հազարներով քաղաք գալ սկսեցին։

Փողոցները լցուած էին մերկ, վիրաւոր ու քաղցած խմբերով, որոնք այստեղ-այնտեղ խմբուած ուռենիների շուքում՝ պատում էին իրենց տեսածը. մի այլ տեղ մայրը որդու վէրքերն էր կապկպում, մէկը հօրը եղերական վախճանն էր պատմում, մի ուրիշը այլ սարսափ էր նկարագրում։

Այրուած թաղերի ընդհանուր պատկերը անտանելի է. մերկ, սևացած, կիսափուլ պատերը ցից-ցից մնկուել են, հողերն ու մոխիրները մի վայրենի կոշտութեամբ, ծածկել են ամէն բան։ Խանձահոտը, հոտած չրերը, արիւնաներկ վայրերից բարձրացող չորացած արիւնի գարշահոտութիւնները լցրել են օդը անշնչելի մի ծանր հոտով, ասես, արևելցու կեղտոտ ու անխնամ սպանդանոց լինի և ի՞նչ էր իսկական սպանդանոցը սրա մօտ։

Թնդանօթների, հրացանների պայթիւնների և սալաւաթ մարտափողի ձայներից խելռած մեր գլուխները, խլացած ականջները տմտմբում էին, անքնութիւնից դեռ մեր աչքերը չէին բացուել, մենք դեռ կատարելապէս անգիտակ էինք անցած-գնացածին, որը մեզ մի երազ էր թւում։

Անցան օրեր . . . մենք կամաց-կամաց մեզ գտանք, կատարուածը, կարծած-սպասածից աւելի սարսափելի էր։

Իւրաքանչիւր հայ մարդ փոքր առ փոքր կարգի էր բերել իր գործը։

Հրդեհուած տների վրայ, աւերակների վրայ վայող բուերի նման, ամէնքն էլ ողբում էին իրենց ցնան ու կորուստը։

Սոխակուած ու ակամայ շուկան բացուեց, առուտուրն սկսեց, կողոպուտներով հարստացած թիւրքը շռայլութեան ծայրայեղ չափերով կենդանութիւն տուեց մեռած առևտրական կեանքին։

Անթաղ դիակների լեշահոտը ապականել էր օդը, ջրերը, արհեստական աղբիւրների ականների մէջ նետուած դիակները որդնոտելով կեղտոտեցին ջրերը. անքնութիւնը, անհանգստութիւնը, քաղցածութիւնը և ճշտական վախը ձեռք ձեռքի տրուած սկսեցին իրենց աւերը. օրական միջին թուով 20-30 հոգի մեռնում էին տարափոխիկ հանճարակից, այնպէս որ տէրտէրներ անգամ ձանձրացան մեռել թաղելուց։ Եւ մի քանի ամսուայ մէջ պատուհաս հիւանդութիւնը 6000 զոհեր տարաւ։

Այս դեռ բոլորը չէ, ամենավատթարը մնում էր։

Ցուսահատ, դէպի ապագայ երջանկութիւնը անհաւատ, և այդ երջանկութեան համար բնական նեղութիւններին և արհաւիրքներին դիմանալ չկարողացող ժողովուրդը, որոնց փայլուն ներկայացուցիչներից մէկը դժբաղդաբար մեր ժողովուրդն է, դիմում են ստոր՝ ազատութեան ձգտում ունեցողների համար, և կոչտաբեր՝ սեպհական հայրենիք ունենալ ցանկացողների համար— գ ա ղ թ ա կ ա ն ո ւ թ ե ա ն։ Մրուչև աշնան սկիզբը միայն քաղաքից հազարաւորներ փախան, իսկ գաւառները, մանաւանդ սահմանակից Աղբակ, Արճէշ և Ալջավազը գրեթէ խապառ դատարկուեցին։

Թշուառութիւնը գնալով սաստկանում էր, քաղցածութիւնը ծայրայեղ չափերի էր հասնում, գիւղացի փախստականները կամաց կամաց իրենց աւեր գիւղերն էին վերադառնում։

Օգնութեան, նպաստի անհուն կարիք կար։

Խեղճերի, հարստահարուածների իսկական բարեկամը՝ Ամերիկուհի Քըմբըլը հեռացուեց Վանից Կառավարութեան կարգադրութեամբ։

Քաղաքացին, այս բոլոր տանջանքների մէջ, աւելի ճըտատանջւում էր իր կորած զաւակների վիճակով։

Ի՞նչ եղան տղերքը, ո՞ւր են տղերքը, հարցնում էին ամէնքը։

Ե.

Վան քաղաքը թէև ծանր ու թանկագին կորուստներով, բայց պատուով դուրս եկաւ կռիւ-կոտորածից։ Մինչ դժբաղդ գաւառները ենթարկուեցին անլուր դաղանութիւնների, որոնց ճանրամասնութեան մէջ մտնելը մի աւելորդ կրկնութիւն կը լինի։

Գիւղերում քիւրդերը իրենց սխրագործութիւնները առաջ տարին գրեթէ բոլորովին անարգել։ Դիմադրութեան ու ինքնապաշտպանութեան թոյլ փորձեր եղան Շատախի թաղում և Հայոց-Ձորի գիւղերում։ Մինչդեռ եթէ տեղի ունենար լուրջ պատրաստութիւն, գոնէ Ռշտունեան անառիկ լեռների հայաբնակ գիւղերում հրաշքներ կարելի էր գործել։

Այժմ տեսնենք թէ ի՞նչ եղաւ այս բոլոր աղէտների ուղղակի արդիւնքը։

Վան քաղաքում ամէն հասակից ու սեռից սպաննուած էին 600 հոգի, այրուած՝ 500 տուն, երեք եկեղեցի և ուսումնարանը։

Թշնամին ունէր 500 սպաննուած և 800 վիրաւոր։

Վանտոսպում սպաննուած էին եօթանասուն մարդիկ, որոնց աչքի ընկնող մասը չարաչար մահ գտան Շահ-Բաղի թաղում։

Հայոց Ձորում 900 հոգի։ Այրուում և շատ զոհեր են տալիս Ծվատան, Քերց, Անգղ, Կեմ և Հնդստան գիւղերը։

Արճէշում 1600 հոգի, որոնցից 350ը կին, և 600 երեխաներ էին։ Վնասուում են աւելի Արճէշ և Ականց գիւղերը։

Շատախում 300 մարդ, զոհերի մեծ թիւը տուել էին Շատախ-թաղ աւան, Կաճեռ, Կազպի և Շիտան գիւղերը։

Թիմարում 300 հոգի, Մարմեռ, Կիւանենց, Ալիւր և Բոզանց գիւղերը տալիս են մեծ կորուստ։

Վերին-Խոշաբ 70 մարդ։

Ներքին-Խոշաբ 300 մարդ, զոհերի մեծամասնութիւնը Արճակ, Ազարէն և Բոզազքեասան գիւղերը տուին։ Արճակում միանգամից 150 մարդ եկեղեցում կոտորեցին։

Գաւաշը 400 մարդ՝ Նարեկ, Փշավանց, Նոր-գեղ եւ Մոխրաբերդ գիւղերից։

Աղբակը 50 հոգի։

Չկան թուեր միայն Ալջավազ և Կարկառ գաւառներից, իսկ Նոր Դուզ, Մոկս, Կարճկան և մասամբ Բերկրի թեթեւ զոհերով

ազատության և հենթարկության խմբական կոտորածի, շնորհիւ մարդասէր քիւրդ բէգերի։

Ուրեմն ամբողջ Վասպուրականը տուել էր 4640 զոհեր, առանց 5000 Կարկառի և Ալջավազի կորուստով, մինչ անազորոյն հիւանդութիւնը միայն քաղաքում 6000 զոհեր տարաւ, ուրեմն 1000 աւելի, քան օսմանեան բիւրաւոր բաշիբոզուկների, թընդանօթների և հրացանների կոտորածը։

Թուանշանները շատ պերճախօս են։

Կոտորածի, համաճարակի պակասը լրացնում էր գաղթականութիւնը։ Ի՞նչ մնաց։

ԳՌԳԱՎԱԿԱՆԻՍՑ ՈՍՆՕՔ

ԳՌԳԿՎՈՎՍՆ ՔԻՇՆՃԱՂ

ԳՌԳԶԱԿԱՅԱ Ը ՏԳԵՆՅԱԿ

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ա.

Յունիս 8-ի Կարմիր Շաբաթ երեկոյեան, Վանի յեղափոխական—ինքնապաշտպանների խմբերը դուրս եկան քաղաքից, Համաձայն կառավարութեան հետ, օտար հիւպատոսների միջնորդութեամբ, կապած պայմանների։

Խմբերի հեռանալը կէսօրից որոշուած էր, բայց այս միայն զինակիցներին էր յայտնուած։

Երեկոյեան ղէմ երբ յարձակումներ դադարեցին, զինուորները զբաղուեցին ուղեւորութեան պատրաստութիւններ տեսնելու գործով, իւրաքանչիւր ոք վերցրեց նախօրօք պատրաստած ուտելեղէնների տոպրակը, և իրենց տան, մինչեւ անգամ մերձաւորների, ոսկի դրամները, զարդերը և այլ թանկարժէք իրերը, մտածելով որ իրենց հեռացումից յետոյ երկիրը կատարեալ աւերումի պիտի ենթարկուի, ուրեմն աւելի լաւ էին համարում տանել, քանի որ հաւատում էին անվնաս Պարսկաստան հասնելու գեղեցիկ մտքին։

Երբ յայտնի եղաւ կռուողների մեկնումը, նրանց մերձաւորներից ընկեր, եղբայր, ազգական ու դրացի հարիւրաւորներ, մեծաւ մասամբ անզէն, ընկերացան զինակիր խմբերին, որը թէեւ արդելքի հանդիպեց պատերազմական ատեանի կողմից, բայց անօգուտ, որովհետեւ լսող չեղաւ։

Կէս գիշերի մօտեր բոլոր խմբերը հեռացան այդեստանից ու առանց որ և է արգելքի հանդիպելու՝ տեղաւորուեցին Վարագայ բարձունքների վրայ։

Առաւօտ էր։ Վարագայ չքնաղ կուրծքը ուր այդ հսկայական չնաշխարհիկի վիրաւոր ստինքները —Վերին Վարագայ դժբաղդ, և այդ դժբաղդութեան մէջն իսկ վսեմ աւերակները, տակաւին տքնում են ծանր ու անհանդուրժելի վէրքերի կսկծալի ցաւերից, ճռմուռ գալարումները որոնք խլում ալեւոր Լեռան ալեւոր գլխի, երկու խոշոր աչերից —Սասղիկից ու Գալիլիայից զուլալ, խտակ վտակներ կարկաչուն, ճշտահոս արցունքի, որոնք ներքեւում միանալով իրենց նմանների աչերից վազող աղբրակներին, այնտեղ, ձորում, միացեալ ուժով աղաղակում, վայնասուն են բարձրացնում, սիրելի մերկան վերքերը տեսնելով, ու բողոքում են անօրէն աւերիչի դէմ համարձակ շփշփոցով . . .

Այստեղ, այս լայնարձակ ու գեղեցիկ լանջը ծածկել են յոգնած-խոնջած հայ քաջերը, հսկայական ապառաժների թեւերի տակ, լեռնային ճշտաշունչ զեփիւռը օրօր է ասում, ծաղիկներ ու կանանչներ իրենց փափուկ, երփներանգ ու թաւշեայ բարձ ներքնարկներն են տուել, երկինքը իր թափանցիկ վերմակն է քաշել դաղրած քաջերին, որոնք յոգնել են ճշմարտութեան, ազատութեան և եղբայրութեան համար մղած անհաւասար մարտում։

Ամբողջ օրը պատերազմական խորհուրդը և ուրիշ աչքի ընկնող գործող—կռուողները զբաղուած էին ժողով-խորհրդակցութիւնով։ Ինչ անելիք վճռելը չափազանց դժուար էր, որովհետեւ անդէն երիտասարդների քաղաք վերադարձնելը և կամ տանելը խմբի մէջ լուրջ բաժանում էր առաջ բերել։

Ինչպէս քաղաքում, երկրորդ անգամ էլ այստեղ վճռում են միայն դրսեցիների և վտանգուած ու ճանաչուած յեղափոխականների Պարսկաստան չուելը, իսկ անդէնների բացարձակ վերադարձը։

Անդէններ տանելու մտքին պաշտպանները բարձրացնում են բողոք-դժգոհութիւն և ապառնում նոյն իսկ անախորժ պատահարներ յարուցանել, երբ բողոքականների մօտից հալածուածներից շատերը իրենց մօտ են հանում և մի ատիճան ազդակ են լինում իրենց ասածի պաշտպանութեան։

Վանից՝ որ հայելու նման փայլում է Վերին Վարագից նայողի աչքին, ծուխ ու մուխ է բարձրանում, բոլորը փախչում են, թշնամին խոստումը դրժել է, ինչ անել, ահա՛ դժուարին հարց։

Մարտիկ և նրա հետ Պետոն հակառակ են լինում անդէններին միացման, մինչ Աւետիսեանը համամիտ իր փոքրաթիւ հաւա-

տարիների հետ Մարտիկի մտքին, հարկադրուած, ստիպուած է լինում լսել դժգոհների պատկառելի բազմութեան, որոնք դժբաղդաբար և տգիտաբար վճռել էին "առանց անզէնների ո՛չ մի քայլ չառնել, քանի որ զէնք են վերցրել նրանց պաշտպանութեան համար"։

Ցաղթանակը տանում են անզէնները և նրանց զինուած պաշտպանները։

Տէղի է ունենում աղէտալի բաժանումը։

Մարտիկը իր զինուորների հետ բաժանուելով առանձնանում է երկու հարիւրից աւելի հետեւորդներով։ Պետոն մնալով միայնակ իր մի քանի զինուորների հետ, ուզած-չուզած հետեւում է Մարտիկին։ Իսկ Աւետիսեանը բաժանուելով սրանցից՝ կազմում է նոր մարտական խորհուրդ, և միևնոյն ժամանակ իր համամիտների հետ միացած յաջողւում է համոզել մի քանի հարիւրների որ քաղաք վերադառնան։

Ի՞նչ անէր Աւետիսեանը. նրան դժուար էր բաժանուել կարմիր օրերում, կարմիր ուխտով ու գործով միացած ընկերներից, բայց եւ այնպէս չէր կարող և չլսել իր իսկ ընկերների բողոքը։ Եթէ միայն վտանգուածների հետ հեռանար, աւելի վատթար հետեւանք կունենար։

Աւետիսեանը իր 300 զինուորներին և նոյնքան անզէններին նորից կազմակերպելով՝ հարիւրակների, յիսնակների և տասնեակների է բաժանում, ու որոշում երկուշաբթի, ցունիս 10ի առաւօտեան ճանապարհուել դէպի Պարսկաստան Խօշաբ-Բաշկալա տանող գծով։

Բ.

Խումբը առաւօտեան արեւի առաջին ճառագայթներին յանձնեց իր վերջին ողջոյնները Հայրենիքի սիրելի աւերակներին և այնտեղ տանջուող իր արիւնակիցներին տանելու։ Ու ճանապարհ ընկաւ։

Առաջապահ գունդը խմբապետ Մուշեղի առաջնորդութեամբ շարժւում էր կէս ժամով հեռու, ապա գնում էր անզէնների հարիւրակներ և պահեստի գնդեր կողքերից պաշտպանուած միշտ բարձունքներից գնացող և դիրքեր բռնող գնդերով։

Մարտական խորհուրդը մնում էր անզէնների մօտ և իր յա-

բաբերութիւնը պահում հեռաւոր խմբերի հետ մշտական սուրհանդակներով։ Որոշուեց նոյնպէս դրօշակներ վերցնել։

Տպաւորիչ և միանգամայն խրախուսիչ էր խմբերի ամբողջ տեսարանը, մանաւանդ որ չուն տեղի էր ունենում օր ցորեկով, և մինչեւ այդ օր յեղափոխական կեանքում չտեսնուած բազմութեամբ։

Ահա՛ երեւաց մի սպիտակ ձիաւոր։ Ո՞վ է նա։ Թեթեւ քաղաքէտը գլխին, ճամբորդական պայուսակը մի կողքին, հեռադիտակը միւս կողքին քարշ արած, այնպէս ուսին, փամփուշտները աջ ու ձախ, խաչփակ, պսպղուն, զերթ նորահարսի ոսկեմանեակը։ Ո՞վ է,- նա Աւետիսեանն է, խմբի յոյսն ու կեանքը, նրա մարմնացումն, նրա իւրաքանչիւր երեւումը բացարձակապէս ոգեւորում էր բոլորին և մանաւանդ նրանց՝ որոնք միամտութիւն ունէին ազատ, անվտանգ Աւետեաց երկիր-Սալմաստ հասնելու։ Քիչ էին նրանք, որոնք իրենց ուղեւորութեան վտանգաւորութեանը գիտակ, բայց դարձեալ անյուսահատ էին։

Խումբը դանդաղօրէն շարժւում էր դէպ առաջ, որովհետեւ մի դժուար վերելք էր կատարում. պէտք էր բարձրանալ նոր-գեղի գեադուկը (կիրճ)։ Քրդերի մի հրոսակախումբ պատահելով առաջապահ գնդին, և կարծելով որ միայն նրան հետ գործ ունի, կրակ է բաց անում նրանց վրայ, բայց երբ տեսնում են եռւից հասնող բազմութիւնը և իրենց ընկերների նրանց գնդակներից թաւալգլոր դիակները՝ թողնում ու հաղիւ փախչում են։ Մի այդպիսի թեթեւ ընդհարում էլ տեղի է ունենում Հնդստանի ճամբերը, այն էլ պատահաբար։ Այս երկու ընդհարումներն էլ ունենում են իրենց բարերար հետեւանքը, անդէնները թուով 150 հոգի վհատուելով յետ են դառնում վ.ան։

Հնդստանում քիչ հանգստանալուց, ուտելեղէնների ձեռք բերած պաշարը վերցնելուց յետոյ, խումբը շարունակում է ճանապարհը, որի ճամբերքը եղած քրդական գիւղերի բոլոր բնակիչները ֆէդաների ահէն լեռներն են քաշուել. երբեմն գիւղերում պատահում էին և քիւրդ կանայք, որոնց անձեռնմխելիութիւնը ապահովուած էր։

Մերոնց ուղեւորութեան ընթացքում յաջողւում է ձեռք բերել մի քանի ձիեր, իրենց գլխի և շատ անգամ մէկի պաշտպանութեան յանձնուած երամակներից։

Գ.

Յունիսի 13ին, խումբը հասնում է Զուխի արևմտակողմը ընկած Գ ի ւ զ ա լ- Դ ա ր ա—Գեղեցիկ Ձորը։

Կանխապէս պատրաստուած քրդական ցեղերի ձիաւորների ահագին խմբերը կտրելով խմբի ճանապարհը պաշարում են նրան չորս կողմից ամենախիտ շղթաներով ու սկսում կրակ թափել խմբի վրայ։ Կռիւը, որ գնալով դառնում է մի կատաղեալ ճակատամարտ, շարունակւում է մինչեւ երեկոյ։

Անգէնները, նրանց հետ և պահեստի գունդը մնում է ձորի միջում, իսկ ամենավտանգաւոր դիրքերի պաշտպանութիւնը յանձնւում է Մուշեղի, Ուզունի, Գաբլօի և ուրիշների խմբերին։

Գեղեցիկ Ձորի, գեղատես բլուրների վրայ ծփծփում էին գոյնզգոյն դրօշակներ, որոնք ոգեւորում էին միմեանցից ժամերով հեռու դիրքերում ահեղ կռիւ մղող քաջերին, յաճախ սպիտակ ձիաւորի երեւումը և միշտ կեղրոնական խմբի ուրախ երգերը խրախուսում էին սոսկալի ճակատամարտը քաջութեամբ տանողներին։ Մերոնց երգերի և նոյն իսկ պարերի հետ խառնուող քրդական ԼԷ՛ԼԷ՛Ն Ե Ր, հրացանների հաղարաւոր ճարճատիւններ ասես հարսանիք լինէր։ Եւ իսկապէս հարսանիք էր մերոնց համար, նրանք կռւում էին յանուն ազատութեան, իսկ ազատութեան զինուորի համար կռիւը իսկական հարսանիք է, իր վօթած արիւնը՝ ուրախութեան կարմիր գինի, հրացան թնդանօթների որոտումները՝ նուագածութիւն, այդ կռւում գտած մահ կամ յաղթանակը՝ հարս։

Այդտեղ Գիւզալ Դարայում, մերոնց ոգեւորող մի ուրիշ և աւելի զօրեղ ու նուիրական ազդակ էլ կար, —գեղեցիկ Ձորի հսկայ դրացու՝ Զուխի կ ա ր մ ի ր քարերի տակ, յեղափոխական կարապետ զինուորներից Ագրիպասեանն ու Գօլօշեանը, ժայռերի անհուն ծանրութեան տակ տնքող իրենց շիրիմներից վրէժի երգ էին որոտում, իրենց սկսածը շարունակել էին հրահանգում։

Հայրենի երկրի այդ սրբազան վայրերում վհատուել՝ թուլանալ չէր լինում։

Թշնամին աշխատում էր իր պաշարողական շղթան նեղացնել և դրա համար էլ նա յաճախ կատաղաբար գրոհ էր տալիս մեր դիրքերի վրայ, բայց հանդիպելով զօրեղ ընդդիմադրութեան և տեսնելով ընկերների ձիերից գլորուիլը, նա կրկնապատիկ արագութեամբ յետ ու յետ էր փախչում։

Քիւրդը կռւում քաջ չէ, որովհետեւ բացի կողոպուտ-աւարի իդէալից՝ նա ոչնչով չէ ոգեւորւում։

Օրը մթնում էր, բայց Թշնամուն դեռ չէր աջողուել մի ոտ անգամ յառաջ գնալ և՛ աւելի զայրագին ու ուժգին յարձակումներ անել։ Այդ ուժգին յարձակումների ժամանակ, այն էլ զօրքերի գնդակներից, ընկան քաջեր՝ Ուզուն, Օհաննէս Ամիրխանեան, ծանրապէս վիրաւորուեց կորիճ Գաբլօն, որ խնդրում էր ընկերներից հանգստացնել-սպաննել իրեն։ Վիրաւորւում են թեթեւ կերպով Սեդրակ Օտեան, Սահակ Բլնկօեան և չորս էլ ուրիշ զինուորներից սպաննւում, մինչ Թշնամին փախչում էր կռուի դաշտից այնտեղ 80ից աւելի դիակներ թողնելով։

Յաղթութեան դափնին դարձեալ մերոնցն էր։

Արեւը պարտուած խաւարից, իսկ խաւարի որդի Հայերի Թշնամիները, յաղթուած Հայերից, թողին հեռացան Գեղեցիկ Զորից։

Հեռաւոր դիրքերից կռուող խմբերը դալիս միանում են կեդրոնականի հետ, ուշանում են միայն Մուշեղի և Խի խմբերը, որոնց երկար սպասում է Աւետիսեանը, և երբ տեսնում է որ նրանք չեն դալիս և ժամանակը ուշ է, հրամայում է առաջ շարժուել։

Քալէ՛ ու կռուէ, քալէ՛ ու կռուէ։

Դ.

Գիշեր է, մթագին ու խաւարակուռ մի գիշեր, խումբը բարձրանում է դէպի Զուխի բարձունքը, որի վերեւքը ցերեկով նոյնիսկ սովորական ուղեւորին դժուարին տանջանք է տալիս։ Քռռտ ու քարքարոտ սարալանջերով, սեպ-սեպ քարերի վրայով, այն էլ մութ գիշերին, օրերով քաղցած, անքուն, անհանգիստ ու տանջուած կռուողների համար ահռելի կը լինի։

Քրրը՛փ-շրրը՛փ, ընկնում են ուղեւորները, մէկի ոտն է, միւսի թեւն է, երրորդի՝ հրացանն է քարերի հետ ընդհարւում, մէկը ասես կպտաղի գոմէշի նման ախոյեանի դէմ ու դէմ կանգնած գլխամարտ լինի անելիս՝ անդիտակցաբար իր ճամբին ցցուած ժայռին զարնելով. մէկը ա՛յ է կանչում, մէկը վա՛յ, միւսը ա՛խ, չորրորդը վա՛խ։ Բայց ինչ էլ որ լինի, այս բոլորին կը դիմանայ Հայ ֆէդան և էլի առաջ կերթայ։

Երկինքն էլի յօնքերը կիտեց, քիթ ու պռունկը կախեց, թըխպոտ ամպերով զգեստաւորուած սկսեց գոռգոռալ, կարկուտ ու անձրեւ թափել։

ՍԱՐԳԻՍ ՋՈՐԹԱՆԵԱՆ.— ՇԱՀԷՆ

ՕՀԱՆՆԷՍ ԱՄԻՐԽԱՆԵԱՆ.— ՈՒՋՈՒՆ

Սարսափելի՛ էր։

Հսկայական ժայռերը, փոսերը, դարաւանդները, ամէնուրեք ընկած քարերը, որոնց տեսքը արևով անգամ զարհուրելի է, այժմ շունչ առին ու հազար լեզուով խօսիլ սկսան, հազար եղանակով երգեր ձայնեցին, ի՞նչ են ասում նրանք, ինչո՞ւ են այդպէս։ Կարկուտը թափւում, զարկւում է, անձրևը մաղւում, իսկ ճամբորդները այս զարգանդալի միջոցումն անգամ շարունակում են վերելքը։ Պիտի բարձրանալ, միշտ դէպի վե՛ր ու վե՛ր, փրկութիւն ու կեանք միշտ դէպի վերերումն են որոնում, երկրի վրայ չգտածը՝ երկնքումն են փնտռում։

Անէծք էն գիշերին։

Բնութիւնն ու մարդիկ ժողուել իրենց հսկայական ոյժերը, վրէժխնդիր թափով, անհուն ցասումով հալածում էին ազատութեան փոքրաթիւ, բայց միշտ անվհատ զինուորներին։

Վերջապէս հասան լերան գագաթը, ուր հիւսիսի ցունաւարեան սառնամանիքը փչում էր ու փչում։

Մինչև ոսկորները թրջուած ուղևորները ցրուեցին այս ու այն քարի տակ, գոնէ չոր հող գտնելու, իսկ ոմանք դէզեր էին ժողւում մեծկակ ժայռերի տակ վառելու համար։

Ամպերի ու փոթորիկների յաւիտենական հարևան Զուլի բարձունքի վրայ խարոյկները վառուեցան, խաւարը տեղ տեղ փարատուեց վայրկենաչափ։

Ե.

Նախ քան խմբերի Վանից դուրս գալը, թշնամին արդէն կազմ ու պատրաստ սպասում էր նրանց։ Բայց հայ յեղափոխականի անուան սարսափը, նրա առասպելական քաջութիւնը ու անձնուիրութիւնը, և Վանում նրանց դիմադրութիւնը, հաղարաւորներից կազմուած հայ բանակի հռչակը—նրանց լուրջ երկրուղ էր պատճառել, այնպէս որ ճանապարհի վրայ եղած բոլոր գիւղերը, ինչպէս տեսանք, դատարկուել էին քիւրդերից։ Խօշաբից դուրս էին բերել թնդանօթները, մինչ թիւրքեր ու քիւրդերը խնդրում էին իրենց ապաստան տալ ու պաշտպանել իրենց, երբ ֆէդաներ կը տիրանան Բաշկալին ու Խօշաբին։ Այս բոլորը ի նկատի ունենալով և լսելով կառավարութեան հրահանգներին, Շէյխ Համիդ փաշան և Շէյխ Հասան, սրբազան կռուի հրաւէր կարդացին, լսեցին հրաւէր ու եկան՝ Նօր-Դուզի, Մոկաց, Զիլամերկի, մեծ ու

փոքր Խօշաբների, Բարվար ու Բեղարի, Սօմայի, Հարքիի, և նոյնիսկ Կորդուաց երկրի քրդերը. Շիկակներ, Հարքիներ, Բէգզադաներ, Գաւդարցիներ, Մամադցիներ, Թակուրցիք, Մլանցիք, Շամակցիք, Փօջարներ ևն. ևն. քրդական աշիրաթների բիւրաւոր հեծեալները, միանալու Բաշկալայի, Գեաւառի, Խօշաբի և Բարթողմէոսի զօրագնդերին։

Թշնամու այս զարհուրելի բազմութիւնը, պաշարելով հայ քաջերին Գիւղալ-Դարայում և չկարողանալով նրանց բնաջինջ անել, որոշում է յարձակողականից պաշտպանողական կռուի պատրաստուիլ, որովհետև նա ապատում էր որ Պարսկաստանից էլ հայ խմբեր կը հասնին, և իրենց երկու կրակի մէջ կառնեն։

Բայց իրապէս ի՞նչ էր ներկայացնում թշնամու տասնեակ հազարներին այսպէս երկիւղ ազդող հայոց ոյժն ու զօրութիւնը։ Օրերով անքուն, բանջարեղէններով ու խոտով կերակրուած, տանջուած ու խպառ յոգնած մի բաժան-բաժան եղած խումբ, ռազմամբթերքի անբաւական պաշարով, և այս բոլորի հետ Զուխի վերայ կարկուտով ու ցուրտով պարգևատրուած երկնքից։

Ուժերի համեմատութեան տարբերութիւնը խկապէս հսկայական էր։ Հերոսութեան ու քաջութեան, ճարպիկութեան ու անձնուիրութեան դափնիները, որոնք այնքան էժան են տրուում այս ու այն հասարակ զինուորին ու շքանշաններով զարդարուած, զանազան զօրավար հրամանատարներին,—միայն այստեղ խկապէս դիւցազուն քաջերին է արժանի և վայել։

Մինչ Աւետիսեան ու իր հաւատարիմները գտնուում էին այսպիսի ճակատագրական ու ճգնաժամային այս վիճակի մէջ, X.-ը դէպի արևմուտք՝ Վան էր գնում, ուր հասնելով անվտանգ, յետոյ քաջութիւն ունեցաւ արտասահմանում հրապարակային բեմերից իրեն Աւետիսեանի զինակից յայտարարել . . . Իսկ Մուշեղի խումբը առաջանալով դէպի արևելք, Աղբակի Հասփատան գիւղում կռուում է քրդերի հետ, անցնում է Պարսկաստան. երբ մի լուսնկայ գիշեր, Սալմաստի հին քաղաքի վերեր քռեր ասուած բլուրների վրայ պաշարուում է քրդերից, սպաննուում ինքը Մուշեղ և 20 ընկերներ։ Ազատուում են 30 հոգի, որոնք կիսակենդան ու մազապուր հազիւ Սալմաստ են հասնում։

Սալմաստում յայտնուում է մեծ խմբի կէս ճամբին յետ մնալը, մինչև պատրաստուիլը ու հազիւ Դէրիկ հասնելը, մեծ խմբի բանը վերջանում է։

Զ.

Փոթորկոտ ու խռոված երկինքը հանդարտւում է, զայրացած ու ապա իր զայրոյթի ոճիրին ի տես նա, ասես, ցաւում է իր աբարքի վրայ, քնքշանալով բոցավառւում է արևելեան հորիզոնը, քաշում է խաւարահիւս վարագոյրը արևի երեսից, նրան դրդում է գնալ մխիթարել ու սփոփել իր կատաղութեան թշուառ զոհերին։

Խումբը շարժւում է դէպի ցած, Զուխի ապերախտ ու անհիւրընկալ բարձունքից և բաց դաշտում նկատւում է թշնամուց, որը տեսնելով նրա քիչւորութիւնն ու ուժասպառութիւնը՝ ուժեղ ու ամուր շղթայ կազմած, պաշարում է ու յարձակում գործում։

—Տղե՛րք, ասում է Աւետիսեանը, այլևս հասաւ մեր վերջին րոպէն, ահա փայլում է արևի շողերի փայլից Բարթողի վանքը. գրո՛հ տանք, պատռենք թշնամու շղթան ու տիրանանք վանքի ամրութիւններին։

Բայց հարթութեան վրայ վխտացող թշնամու անհամար խըմբերը թափում են հրեղէն կարկուտի կապարէ գնդակները, որոնք հնձում էին կեանքեր մէկը միւսի յետեւից։

—Դէ՛, տղե՛րք, ձեզ մատա՛ղ, տղե՛րք, յառա՛ջ, անա՛հ, աներկի՛ւղ։

Ընկնում են քաջերը, մնաս բարեւի, համբոյրի էլ ժամանակ չկայ, կենդանի մնացողները շարժւում, քայլում են կիսամեռ ու անշունչ ընկերների դիակների վրայով եւ յաջողում փշրել թշնամու այն շղթան, որ կապել էր դէպի վանքը տանող ճանապարհը։ Երբ հնչում է օսմանեան չարագուշակ փողը եւ պատերազմական բուռն յարձակման հրաւէրը երգում, հայկական սրբատեղիից դուրս են գալիս կանոնաւոր զօրքերի խմբերը շարան-շարան ու դրդում քրդերին աւելի նեղցնել պաշարողական շղթան ու վանգամից գրոհ տալ։

Յարձակուող թշնամուն դիմադրելու էլ հնար չկար. հըրացանների փամփուշտները հատան, այժմ մնում էր մի յանդուգն փորձ—ձեռնամարտ սրերով ու ատրճանակներով։

Ու հրացանները ջարդ ու փշուր անելով, Աւետիսեանի շուրջը մնացած մի քանի տասնեակ զինուորների համարձակ, ճակատները թշնամու գնդակներին բռնած՝ յարձակւում են ու սկսում ձեռնամարտը։ Սրերը շողալ ու շառաչել են սկսում, մերթ բարձրանում կարմրած ու արեան կաթիլներով զարդարուած, մերթ իջնում ու կորչում։

Հրացանները տասնեակ հազարներով որոտում են, ամպի նըման ծուխն է բռնում կանաչապատ դաշտը, սրերը շառաչում են, վիրաւորները հառաչում են, մէկ մարդը կանգնում է երկու դիակի վրայ, քայլողի ոտներն են կարմրում, արեան լճերը այս բոլորը նկարում են արևի տակ հայելացած իրենց երեսների վրայ։

Ու քիւրդը ականատես այս կռուին երգում է.—

"Մէկ գնդակը, մէկ մարդ է գլորում,
Այսպիսի կռիւ ոչ ոք չի պատմում „ . . .

Զեռնամարտը շարունակւում է, վայնասուն ու ճիչ, մարտի հրաւէր երգող փողի գոռ ձայնը, ձիերի խրխինջոցը, քրդական լէ՛-լէ՛ների մերթ կորովի, և՛ մերթ տխրալի հնչիւնները, վանքի բարձրը կտուրներին ապաստանող ստրուկ-անզգայ հայերի ողբն ու կոծը միանալով խռոված Զաբի անհանգիստ ալիքների մորմոքիչ մահերգի հետ՝ կազմում են մի անպատմելի ժխոր, մի խլացուցիչ ռազմերգ՝ քաջերի ու հերոսների վերջին օրհներգը, յետնորդների համար երգած վերջին վրէժ-կտակի խնդրանուագ երգը։

Քիւրդը երգում է.

. . . "Քաջ աշիրներ, ժողուեցէք
Շուտ Աղբակի դաշտ հասէք.
Քաջ Թարլամաղ Փէղային
Պետ հայերի հազարին,
Կռուով գալիս է Վանից
Նա մեզ զրկէ մեր կեանքից . . ."

"Աւետիսեան Մկրտիչ
Կանչեց, ընկե՛րք կորիճ,
Շո՛ւտ, շո՛ւտ զարկէ՛ք, իմ քաջեր,
Քանի արև չի մտեր„։

Հսկայական ժխորը լռեց, մի րոպէ բոլորը ապուշ կտրան . . . Հայ քաջերն ընկան։

Թշնամին էլի խառնուեց ու վրդովուեց, այս անգամ անշընչացած դիակները ենթարկուեցան նրանց յարձակման։ Պլոկել ու կողոպտել դիակները,—ահա քրդին արժանավայել ու սիրելի գործ։

Կողոպուտը վերջանալուց յետոյ, Թշնամին սկսեց հաւաքել իր զոհերի հարիւրաւոր դիակները, որոնք հայերից պակաս չէին իրենց թուով։

Լռեց Աղբակի դաշտը . . . ամէն ինչ վերջացաւ։ Միայն Զա-

ը՝ կարմրած գետը, արեան փրփուրներ իր կոհակներին խառնած, մորմոքում էր ու մրմռում։

Կանաչին դաշտի, կարմիր արնալճերի մէջ լողում էին քաջերի սիպտակ ու մօրէ մերկ մարմինները։ Մէկի գլխին, միւսի ճակտին, երրորդի թշին, չորրորդի կրծքին, և այսպէս բոլորի վրայ էլ ծաղկել կարմրել էր մի լալա, մէկ ախպրանց—արուն՝ վէրքի բերաններ, որոնց բարբարոս քրդուհին անգամ ողբաց, ափսոսաց, ու դառնալով իր տղամարդուն յանդիմանելով երգեց.

"Դո՛ւ աշիր չես, ամօ՛թ քեզ,
Ինչո՞ւ գնացիր կռուի դաշտ.
Դո՛ւ էլ, ամօ՛թ, ռօմի պէս
Ցօշոտեցիր դիակներ շատ . . .

"Ախը՛ր, ֆէղան յոգնած էր,
Նրան կարկուտ ծեծած էր,
Հօ՛ քեզ չէր նա թշնամի
Զահէլ-Ջիւան ֆէղայի . . .":

Թշնամու խուզարկութիւնները գտնում են Հայերից Ֆենդանի Ցեացած 5 անզէններ, որոնց ձերբակալելով՝ որոնել են տալիս և գտնում են Աւետիսեանի մարմինը, որը՝ ի պատիւ իր խմբապետութեան—թաղում են մի բլրակի վրայ առանձին։ Այժմ քաջերի շիրիմը բարձրացել է ահագին քարակոյտով, որովհետև իւրաքանչիւր անցորդ "Ողորմի„ ասելու տեղակ, մի քար է ձգում։ Միւս օրը վանքի պարիսպներից դուրս չորս խրամատներ են փորում ու թաղում հարիւրաւոր դիակները։

Աղբակի դաշտի այս պատմական կռուում, Յունիսի 14ին, Աւետիսեանի հետ ընկան, յեղափոխական ուսուցիչ, քարոզիչ, կազմակերպող և կռուող՝ Գրիգորիս Աւետիսեան, Ա. Ախիկեան, Ե. Բամբակդիղեան, Սեդ. Օտեան, Կուլողլի եղբայրներ, Սանօեան Կարօն, Շահէն, Սև-Լաճ, Քօչար, Մհէրի Տիգրան, Հաֆթվանցի Զաքար, Մարտիրոս, Զէյթունցին, Սեմ և 340 նահատակներ։

Է.

Մինչ այս դէպքերը տեղի էին ունենում Գիւզալ-Դարայում և Աղբակի դաշտում, Մարտիկ իր 110 զինուորներով, Պեռօն իր 10-20 հետեւորդներով, տակաւին մնում էին Վարագայ Կողպանց լեռնամասում, իրենց պաշտպանութեան տակ պահելով քաղաքացի և գիւղացի հարիւրաւոր փախստականների։ Կառավա-

րութիւնը իմանալով այդ՝ հեծեալ և հետեւակ զօրքերի բազմութեամբ և թնդանօթներով գնաց հետամուտ եղաւ, բայց ոչինչ անել չկարողացաւ։

Վերջապէս Յունիսի 15ին Մարտիկ 70 ընկերներով, Պեսոն 15 տեղացի ընկերներով մեկնեցին դէպի Պարսկաստան Աղբակ—Սարայի միջին ճանապարհով։ Իսկ մօտաւորապէս 200 անդէններ՝ Տէրօեան Տիգրանի և Հնչակեան դէնքեր կրող 30 զինուորների ուղեկցութեամբ՝ Վան են վերադառնում։

Այստեղ միջանկեալ կերպով պիտի ասեմ հետեւեալը։

"Դրօշակ"ը Պեսոի նահատակութեան առթիւ, և ուրիշ շատ անգամ, նրան փառքի և քաջութեան ձրի ու առատ դափնիներ շռայլելուց յետոյ, նրան տալիս է "Վասպուրականի պահապան հրեշտակ" տիտղոսը։ Այժմ հարց. ի՞նչպէս էր պահպան հրեշտակութիւն անում Պեսոն՝ իր մի քանի ընկերներով . . .։

Խումբը ասօրի ուղեցոյց Լազարի առաջնորդութեամբ անվտանգ հասնում է Սալխանայ գիւղի և Գարահիսարի մօտերքը՝ Քաղի-Դաղ, ուր և հանգստանում է։

Ամէնուրեք վխտացող քրդական հեծեալները — որոնցից մի խումբ կողոպուտից էր վերադառնում, միւսը հրդեհելու գնում՝ երրորդը կոտորելու, նկատում է ֆէդաների քնած խումբը և պաշարում,— այսպէս էր պատմում այդ կռուից ազատուած մէկ աստի՝ Վալատը։ Բայց ի՞նչպէս եղաւ, կռիւն ի՞նչպէս սկսուեց, ի՞նչպէս վերջացաւ դա տակաւին յայտնի չէ, միայն յայտնի է որ այդ կռուում զոհուեցին Հնչակեան Մարտիկի հետ —որը Վանում ճանաչուած եւ սիրուած էր իբրեւ լուրջ, անկեղծ և բոլորանուէր մի յեղափոխական— Ուսուցիչ Ցոլակ, զինուորներ արի և կորիծ՝ Տրդատ, Տիգրան, Վահէն, Վարդան, Լևոն և Ողմեցի Վանիկ ու Մուրատ, դաշնակցական Պեսոն և մի հոգեւորական, որը միայն այդ դասին պատկանելուն համար յիշատակութեան է արժանանում։ Զոհուեցին Քաղի-Դաղի նուիրական վայրերում 85 հայ քաջեր, ազատուեց միայն ուղեցոյց ասօրին և Սալմաստ հասաւ։ Հաւանական իրողութիւնն այն է, որ նա ստոր դաւաճանութեան զոհ գնաց։

ՎԵՐՋ



ՓԱՆՈՍ ԹՈՓԱԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ



ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱԽԻԿԵԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑ

(ՄԱՐՏԻԿ ԼԵՒՈՆԵԱՆ)

Իր կեա՞նքը... Երկա՞ր եղաւ միթէ նա... Հազիւ սկսած ծաղկել՝ անգութ մանգաղով նա կտրվեցաւ յաւիտեան։ Մի կեանք՝ եռուն զգացումով,—այո՛. մի կեանք՝ ազնուագոյն մտքով տոգորուած,—այո՛. բայց մի կեանք այնքա՞ն կարճատև, այնքա՞ն աբրագասահ, որ եկաւ ու անցաւ, ինչպէս երազ, ինչպէս տեսիլ, ինչպէս գարնան մեկ ասուպ, որ հայոց կեանքի հորիզոնում երևեցաւ, փայլեց և ապա շուտով մարեցաւ.. Այդ ազնիւ սիրտը, որ գիտէր բաբախել այնքան ուժգին այն նպատակի համար, որը նրան բաբախեցնում էր. այդ քաղցր ու համեստ, բայց և հաստատամիտ ու վճռական բնաւորութիւնը, որ ջերմութիւն ու կրակ էր հաղորդում այն գործին, որին ծառայելու համար էր ստեղծված, այդ միտքը՝ խոհուն ու համարձակ, անխոնջ ու շիտակ, բարձր ու ճշակված.—ո՛չ, այդ ամենը չը պիտի այդպէս շուտ չքանային, զրկելով իրանցից այն ժողովրդին, որն այնչափ պէտք ունի իր սակաւաթիւ հազւագիւտ զաւակների կեանքին ու աշխատութեան... Եւ սակայն նա չըկայ այլ ևս... և նրա ազնիւ կերպարանքը, որ կարծես միշտ մեր առաջն է օրհասական օրից ի վեր, նրա կերպարանքը մի նորոգված կսկիծով ու ցաւով առաջ է բերում մեկ ուրիշ ատուեր, որ երբէ՛ք չէ բաժանվում մեր մտքից։ Մարտիրոս Սարուխանեանց և Բարսեղ Զաքարեանց, ի՛նչ քաղցր անուններ. երկուսն էլ գրեթէ միևնոյն հասակի—հազիւ 23 տարեկան, երկուսն էլ ընկան սուրբ գործի պատերազմի դաշտում, մէկը 100 կտրիճ ընկերներով ընդդէմ 20000-ի, միւսը 7

ընկերով ընդդէմ 700-ի, և երկուսն էլ կուռելով իբրև հերոսներ և ընկնելով անձնուրաց ու անմահ նահատակներ՝ մի-և նոյն ժողովրդային Դատին համար մի և նոյն դրօշի, Հնչակեան դրօշի տակ, միևնոյն յաղթական կոչով դէպի ազատութիւն, դէպի կատարեալ ազատութիւն։ Մէկը Մարդուանում, միւսը Վանում՝ Թշնամու հազարաւոր գնդակների կարկուտի տակ, երկուսն էլ խրախոյսն ու քաջալերը, առաջնորդն ու հոգին իրանց ընկերների, որոնք իրանց քաջ մահով կապվեցան նրանց երկուսի անուան հետ յաւիտեան կերպով, անուններ, որ կրում են փառքի փշէ պսակն իրանց ծաղիկ հասակի ճակատի վրայ։

Մարտիկն, ինչպէս միւսը՝ Բարսեղը, պատկանում էին նոյն խմբին, որ դեռ այդ երկուսն էլ իրանց պատանեկան հասակում կազմել էին Բագուի Բէալական դպրոցում։ Մարտիկն էլ, ինչպէս Բարսեղը, Շուշի (Կովկաս) քաղաքումն է ծնվել։ Մարտիկն էլ, ինչպէս Բարսեղը, ուսանող էր, երբ գալով Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնը, իր ջերմ փափագը յայտնեց ու թախանձեց գործել Թիւրքայ-Հայաստանում, իր կեանքն ու ապագան ամբողջովին նուիրելով Հայ յեղափոխական գործին։ Մարտիկն ուսանող էր Ս. Պետերբուրգի Տէխնոլոգիական բարձրագոյն դպրոցում։ Վառված յեղափոխական կայծով և դարուս ամենաբարձր գաղափարներով, նա, ինչպէս Բարսեղը, յանցանք համարեց դեռ նստած մնալ ուսանողական նստարանի վրայ, երբ իր Հայրենիքը հեղեղվում էր արեան մէջ, երբ իր ժողովրդի գոյութեան ու ապագայի խնդիրն էր առաջ դրված, երբ ամեն մի Հայ սրբազան պարտականութիւն ունի իր ոյժն ու միտքն այդ օրհասական խնդրի լուծման ծառայեցնել։ Եւ 1895 թ. մայիս ամսին նա գնաց Վան իբրև Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ։ Նա իրեն կեղծ մականուն ընտրեց Լևոնեան անունը, իբրև յիշատակ իր անմոռանալի ընկերի, Զաքարեանցի, որի կեղծ անունն էր Լևոն։ Նա գնաց, ուխտելով իր Բարսեղի վրէժն առնել։ Եւ առաւ այդ վրէժը, բայց ի՞նչ ծանր գնով.—միւսի սպանման վրէժի համար նա ինքը սպանվեցաւ, և սպանուեցաւ Վանի այս ամառուան պատմական կռիւների միջոցին, կռիւներ, որոնց տաղանդաւոր վարողն ինքը Մարտիկն էր, և որ անպատմելի հերոսութեամբ կուռեց թշնամու դէմ մինչև իսկ այն ժամին, երբ իր բոլոր հարիւր ընկերներն էլ սպանված՝ ինքը մենակ էր մնացել միայն երկու ընկերի հետ պատերազմի դաշտում։ Այն մեծ ծառայութիւնները, որ արել է Մարտիկն իր մի տարուայ գործունէութեան ժամանակամի-

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ZUUՌ-Арм. ССР
Ա. ԻՄ. Ա. МЯСНИКЯНА
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՆՎԱՆ

ջոցում Վասպուրականում, այսօր չեն ուրանում իր հակառակորդներն անգամ, և ապագան աւելի որոշ չափով կը ծրագրէ այդ անմոռաց ու հաղւադիւտ գործչի դերն ու արժանաւորութիւնը Վասպուրականի վերջին տարւայ յեղափոխական գործերում։

Մարտիկի տարաժամ մահը մի խիստ ծանր կորուստ է հայ յեղափոխական գործի համար, որի սուրբ ասպարէզում մէկ առանձին փայլուն ու սրտառուչ շրջանի մէջ է անփոփվում նրա քաղցր անունն իր ընկեր Բարսեղի քաղցր անուան հետ, մէկ առանձին և ուրոյն տեղ գրաւելով հայ յեղափոխական գործի անմահ արձանի վրայ։ Մարդ մի խորին տխրութեամբ է համակվում այդ երկու թանկագին և դեռ տաք դիակների առջև, որ ծածկված են վատ թշնամու գնդակներով ու սուիններով։ Մարտիկ և Բարսեղ, մինչև այսօր հայ յեղափոխական գործում նրանք ներկայանում են իբրև մէկ առանձին զոյգ, ուրոյն, օժտւած բարձր արժանիքներով, վառվռուն՝ իրանց դեռահաս տաղանդով, անձնուէր՝ իրանց հաւատաց ու սիրող սրտերի ամբողջ զօրութեամբ, օրինակելի՝ իրանց մեծ գործով և անմահ՝ իրանց մահով։ Բարսեղն այսօր հանգիստ քնած է Մարզուանում, քնած է սառ հողում այն երկնքի տակ, որ այնքան սիրում էր նա։ Մարտիկն . . . աւա՜ղ, նրա թանկագին ու սիրելի մարմինը կորած է մեզ համար. մենք չը գիտենք, թէ ի՜նչ եղաւ նա բարբարոսների ձեռքի տակ . . . Վասպուրականի գեղանի դաշտերն ու հովիտներն՝ ամեն մի քայլափոխում միշտ կը յիշեցնեն Մարտիկի հետքը. Վասպուրականի լեռները դեռ երկար, երկա՜ր տարիներ արձագանգ կը տան Մարտիկի խրոխտ ձայնի քաջարի կոչերին. Վասպուրականի հոսուն ջրերը դեռ երկար կը հնչեցնեն հայոց ականջին այն փառքի երգը, որ երգում էին նրանք Մարտիկի ականջին, երբ մերձիմահ փակում էր ընդ միշտ իր արծուի աչքերը. և Վասպուրականի այն վայրում, ուր պաղեցաւ նրա անգին մարմինը, այսօր բուսած է նրա աղնիւ արիւնով ներկված կարմիր մի ծաղիկ . . . Կանգ առնենք դրա դիմաց և գլխաբաց ծունր իջնենք այդ ծաղկի առաջ՝ վրէժն ու դառնութիւնը մեր սրտում և արտասուքը մեր աչքում։

"ՀՆՉԱԿ"

Ս. ԳՐԻԳՈՐԻՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ

ԹԵՐԹԱԹԵՐԹ

Քաղաքական, Յեղափոխական, Հասարակական, Տնտեսական

Կը հրատարակուի ԱՄԷՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԷ

Ամերիկայի	Համար	Տարեկան	1.25 տօլ.
,,	,,	Վեցամսեայ	.75
Արտասահմանի	,,	Տարեկան	8 ֆր.
,,	,,	Վեցամսեայ	5 ֆր.

ասոյէ՝

M. LAMBERT

199 P. O. Box, M. S.

New York City

(U. S. A.)

2011

2013